

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՅՈՒՏ ԱՅՍՈՐ ԿՐՆԴՈՒՆԻ ԲԸՐՆԵԹ ՇԱՅՈՒՄՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Նախագահ Լահուտ կ'ընդունի Ֆրբլին

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ Քրրնէթ Շահուտանի հանդիպումի պատուիրակութիւնը կ'ընդունի այսօր՝ Ուրբաթ կէսօրէ առաջ ժամը 11:00ին: Ըստ լրատուամիջոցներու հաղորդած լուրերուն՝ պատուիրակութիւնը պիտի ըլլայ մեծաթիւ:

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրբլին, որ հանդիպումէն ետք կատարած իր յայտարարութեան մէջ նկատելի տուաւ, որ նոր առիթ ներկայացած է երկրի քաղաքական մթնոլորտը բարեփոխելու եւ այդ ոլորտէն ներս նոր ուժ եւ մտնեցում տարածելու, եւ այս առիթը պէտք է օգտագործել, որովհետեւ այդպէս կը թելադրեն ազգային գերագոյն շահերը:

Ֆրբլին ըսաւ, որ նախագահ Լահուտի կատարած եւ տակաւին շարունակուող հաղորդակցութիւններն ու հանդիպումները կարեւոր ազդակ մըն են, որոնք պիտի ձեւաւորեն երկրին ներքին բեմի նոր հանգրուան մը, որուն ընդհանուր գիծերը կը ճշդուին շրջանէն ներս տիրող պայմաններուն լոյսին տակ:

Ֆրբլին յայտնեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է այլ հարցեր, ինչպէս՝ Մաշինարայի գաղթականներու պարագան եւ անոնց հատուցումները եւ տունդարձը ապահովելու անհրաժեշտութիւնը: Նախագահ Լահուտ անմիջապէս հետապնդեց այս հարցը եւ ցուցմունքներ տուաւ կարելի եղած չափով շուտ լուծելու այս հարցը:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց արդարութեան նախարար Սամիր Ժըսըրը, որուն հետ քննարկեց արաբական երկիրներու արդարութեան նախարարներու խորհուրդի Պէյրութի մէջ գումարուելիք ժողովի նախապատրաստութիւնները: Ժըսըր նաեւ ներկայացուց արդարութեան նախարարութիւնը արդիական սարքերով օժտելու աշխատանքին ընթացքը, զոր կը ֆինանսաւորէ Միջազգային Դրամատունը: Նախարարը յայտնեց, որ նաեւ իօսած են դատարաններու ակադեմիայի քննութեան արդիւնքներուն եւ նոր դատարաններու նշանակումին մասին:

Երեսփոխան Այյուպ Հըմալեօտի գլխաւորութեամբ Ամալ շարժումի պատուիրակութիւն մը նախագահ Լահուտը հրաւիրեց իմամ Մուսա Սատրի անհետացումին 24րդ տարեդարձին առիթով կատարուելիք յուշահանդէսին:

ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՌԵԱԿԻՆ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Իսրայէլի ներքին գործոց նախարար էլի Եիշայ Երէկ յայտարարեց, որ ձեռնարկած է միջոցառումներու Երուսաղէմի մէջ բնակչութեան իրաւունքէ գրկելու համար չորս արաբներ, որոնք ձեռնարկուած են իսրայէլացիներու դէմ գործողութիւններու մեղսակցութեան յանցանքով:

Շին Պէթ ապահովութեան գործակալութիւնը հաղորդեց, որ Արեւելեան Երուսաղէմի չորս բնակիչներ ու ռամալլացի մը ձեռնարկուած են անցեալ շաբաթ Այրայորդանանի մէջ: Շին Պէթի համաձայն, հինգ պաղեստինցիները կը պատրաստուէին նոր յարձակումի մը եւ թէ բոլորն ալ Համասի հետեւորդներ են:

Ներքին գործոց նախարարը յայտնեց, որ Արեւելեան Երուսաղէմի չորս բնակիչները իսրայէլեան շահագործած են շարժումի ու աշխատանքի ազատութեան իրաւունքը, որ իրենց տրուած է իբրեւ մնացորդ բնակիչներու Եիշայ աւելցուց, որ նախարարութեան քաղաքական քառեկան խորհուրդը զրկելու համար զանոնք այդ իրաւունքէն: Եիշայ ըսաւ նաեւ, որ պատճառ չկայ դատարարութեան մը սպասելու, որովհետեւ փաստերը անհերքելի են եւ կը հաստատեն, թէ Համասի անդամները ահաբեկչական գործողութիւններու մասնակցած են:

Արեւելեան Երուսաղէմի արաբ բնակիչները իսրայէլացի քաղաքացիներու վայելած բոլոր իրաւունքները ունին, բացի երեք իրաւունքէ: անոնք չեն կրնար քուէարկել, իսրայէլեան անցագիր չեն կրնար եւ կը կորսնցնեն մնացեալ բոլոր իրաւունքները եթէ Արեւելեան Երուսաղէմէն դուրս ելլեն:

Պաղեստինեան իշխանութեան աշխատանքի նախարար Ղասսան Խաւթիպ յայտնեց, որ բանակցութիւնները առիթ պիտի ըլլան աւելի լաւ հասկնալու պաղեստինեան բարեկարգումներու ծրագիրը: Ան յոյս յայտնեց, որ Հանդիպումին աւարտին հրապարակուելիք յայտարարութիւնը մատնանշէ արձանագրուած յառաջդիմութիւնը բարեկարգումներուն:

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզի մէջ երէկ սկսան երկօրեայ բանակցութիւններ պաղեստինեան ու իսրայէլեան

ԻՐԱԵՐ ՀԱՐՑՈՎ

ՄՈՒՊԱՐԱՔ - ՇԱՐԷՋ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

ԳԱՀԻՐԷ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Եգիպտոսի նախագահ Հիսնի Մուպարաբ Հիմզաբքի օր հանդիպում ունեցաւ Մուրիդ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի հետ, քննարկելու համար Իրաքի դէմ ամերիկեան հաւանակալ յարձակումի մը ծրագիրը, հաղորդեց «Ահրաւ» օրաթերթը:

Արաբական երկիրներ, որոնց կարգին են Եգիպտոս եւ Մուրիա դէմ կ'արտայայտուին ամերիկեան յարձակումի ծրագիրին:

Շարէի Գահիրէ ժամանած էր Չորեքշաբթի օր եւ տեսակցութիւն ունեցած էր արտաքին գործոց նախարար Ահմէտ Մահէրի հետ: Այս ան ուղղուեցաւ Մարսա Մաթրուհ, նախագահ Պաշտաբ Աստեմ Գամալ մը յանձնելու համար Մուպարաբի: Նամակին ընդհանրապէս թեմ յայտարարուեցաւ, սակայն մամլոյ աղբիւրներուն համաձայն, անկախ կ'առնուի Իրաքի դէմ ամերիկեան գործողութեան մը ծրագիրին: Շարէի - Մուպարաբ հանդիպումի աւարտին յայտարարութիւններ չկատարուեցան:

ՎՐԱՍՏԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արաբական լրատուամիջոցներ հրապարակած են Վրաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ յայտարարութիւնը Լեռնային Ղարաբաղի մէջ կայացած նախագահական ընտրութիւններուն մասին:

Ըստ արաբական «Չորեքշաբթի» թերթին, յայտարարութեան մէջ նշուած է. «Վրաստան կը պաշտպանէ պետութիւններու տարածքային ամբողջականութիւնը ու միջազգային ընտանիքին կողմէ ընդունուած սահմաններու անխախտելիութեան սկզբունքը, ինչպէս նաեւ այն բոլոր օրէնքները, որոնք իրենց արտացոլանքը կը գտնեն ՄԱԿ Ապահովութեան Խորհուրդի, Եւրոպական Միութեան եւ ԵԱՀԿ յայտարարութիւններուն մէջ»: «Չորեքշաբթի» նշած է, որ Վրաստանի արտաքին գործոց նախարարութիւնը իր յայտարարութեան մէջ յատկապէս ընդգծած է, թէ «Ղարաբաղը կը պատկանի Արցախին»:

ՈՒՎԵՆ ՊԸՆ ԹԱՎԱԼ ԿԸ ՀԵՐՔԷ, ԹԷ ՍԵՆՏԵՑԻ ԳՐԱՍԵՐԵՐ 200 ՄԵԼԻՒՆ ՏՈՒՐ ԳՈՒՐՍ ՀԱՆԱԾ ԵՆ ՄԻՋՏԵԱԼ ՆԱՀԱՐԿՆԵՐԸ

ՏՈՒՊԱՅ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Սէնտցի միլիտարտեր Ուալիտ Պըն Թալալ իշխանը հերքեց այն լուրերը, որոնց համաձայն սէնտցի դրամատերեր մտաւորապէս երկու հարիւր միլիաոն տոյարի ներդրումներ դուրս հանած են Միացեալ Նահանգներէն, իբրեւ բողոք՝ հակապետական զգայութիւններու դէմ, որոնք թափ կը ստանան:

Ուալիտ Պըն Թալալ աւելցուց, որ ինք անձամբ կը պահէ իր բոլոր ներդրումները, ինչպէս նաեւ նոր ներդրում ալ կը կատարէ Միացեալ Նահանգներու մէջ: Բրիտանական «Տայնէնշըլ Թայմզ» թերթը հաղորդած էր, թէ սէնտցի ներդրողներ, որոնց շարքին՝ Ուալիտ Պըն Թալալ, մտաւորապէս 200 միլիաոն տոյարի հեռացուցած են Միացեալ Նահանգներէն, ուր սէնտցի դրամագրուներու ներդրումը կը հասնի վեց հարիւր միլիաոն տոյարի: Ուալիտ Պըն Թալալ զիտել տուաւ, որ հաւանաբար հեռացուած գումարներ կան, սակայն ոչ այն համեմատութեամբ, որ հրապարակուած է թերթերուն կողմէ:

ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ՔՈՉԱՐԵԱՆ ԵՒ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՈՒՆԵՑԱՆ



ARMENPRESS

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ Երեւանի մէջ հանդիպում ունեցաւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկարի Ղուկասեանի հետ: Հայաստանի նախագահի մամլոյ գրասենեակը տեղեկացուց, որ նախագահ Քոչարեան շնորհաւորած է Արկարի Ղուկասեանը՝ Լեռնային Ղարաբաղի նախագահ վերընտրուելուն առիթով:

Հայաստանի եւ Ղարաբաղի նախագահները քննարկած են Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին առնչուող հարցեր:

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԵԿՆԵՑԱԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

20 Օգոստոսին Արժանքին մեկնեցաւ Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեան: Հարաւային Ամերիկա երկրաբաբեայ աշխատանքային անդրանիկ այցելութեան ծրագիրին մաս կը կապմեն այցելութիւններ նաեւ Ուրուկուէյ եւ Պարագուէյ:

Պուէնոս Այրէսի, Բորտոպայի, Մոնթեվիտոյի եւ Սան Փաուլոյի մէջ Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչը հանդիպումներ պիտի ունենայ քաղաքական շրջանակներու, ինչպէս նաեւ համայնքային կազմակերպութիւններու եւ համայնքի անդամներուն հետ: Հրապարակային իր ելոյթներուն ընթացքին, ընկ. Մարգարեան պիտի անդրադառնայ Հայաստանի, Արցախի, Ջաւախքի կացութեան, Սփիւռքի մարտահրաւէրներուն եւ Հ. Յ. Դ. քաղաքական աշխատանքներուն:

ԱՅԿԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

RENT AND SALE

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory services
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ԶՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅԸՐ
ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆԸ, Բ. ՅԱՐԿ
ԵՆՆ. (02) 242356/7

NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.

ՃԱՇԱՐԱՆ ՈՒՎՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(Ժողով կ'Պալոս, Պալոսն ղեկի
Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԵԱՌԱՋԱՐԳ, ՀԱՆԴԱՐՏ ՄԻՋԱԿԱՅՐ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադրած ձաշեր, սակ մէկ անձի 8\$: Խմիչքը՝ ըստ ապապըրանքի:
- Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:
- Ամեն Շաբաթ երեկոները յատուկ յայտագիր համրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուի:
- Փոքրերու յատուկ խաղաղար:
- Կը ստանձնենք ծնունդներու եւ անձնակալ խրախմբները յարմար գիծերով:

ԵԱՌՈՐԸ. Յատուկ ձաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օդի, գարնշուր եւ զովացուցիչ:

ՄԷԼ անձի համար միայն 17\$:

Երեւան. 04 - 808700 եւ 03 - 360667:

ՀԸՉՊԱԼԼԱՅԻ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ՊԼՈՔԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԵՐԱԴԱՐՉԱԲ ԻՐԱՆԵՆ

Լիբանանեան Դիմադրութեան Հաւատարիմ պլոքը, որ երեսփոխան Մոհամէտ Ռաատի գլխաւորութեամբ Իրան մեկնած էր, երէկ աւարտեց իր պաշտօնական այցելութիւնը. ան ընդառաջած էր Իրանի խորհրդարանին մէջ պաղեստինեան ինթիֆատայի զօրակցութեան յանձնախումբի նախագահ Ալի Աբպար Մոհթաշէմիի հրատեղիս:

Պաշտօնական եօթեայ այցելութեան ընթացքին, երեսփոխանական պլոքը տեսակցութիւններ ունեցաւ Իրանի գերագոյն առաջնորդ այաթոլլա Ալի Խամենէիի, խորհրդարանի նախագահ այաթոլլա Մեհտի Քարուպիի, Ալի Աբպար Ռաֆսանճանիի, Ալի Աբպար Մոհթաշէմիի, արտաքին գործոց նախարար Քամալ Խարայիի եւ պաշտպանութեան նախարար Վոր. Ալի Շամխանիի հետ:

Հանդիպումներուն քննարկուեցան Իրան - Լիբանան երկկողմանի խորհրդարանական յարաբերութիւններու բարելաւման հեռանկարները, ինչպէս նաեւ երկու երկիրները վտանգի ենթարկող Իրաքի վրայ ամերիկեան յարձակումի հաւանականութեան առնչուող հարցեր:

Խարայի ողջունեց երեսփոխանական պլոքի այցելութիւնը Իրան, դրուատելով լիբանանեան դիմադրութիւնը եւ անոր յաղթանակը՝ հարաւի բոնագրաւուած հողերու ապաստարանը Իսրայէլի լուծէն: Խարայի շեշտեց, որ Լիբանանի ամուր դիմադրութիւնը պէտք է օրինակ դառնայ ամբողջ շրջանին: Ան անդրադարձաւ նաեւ Հըզպալլայի վարած քաղաքականութեան եւ շրջանային իմաստով անոր պարզած կարելորութեան:

Խարայի հաւատեց, որ Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքի վրայ կատարուելիք յարձակումի պարագային բոլոր արաբական երկիրները միասնակամութեամբ պիտի ընդդիմանան վերջ դնելու ամերիկեան այս վտանգին:

Իր կարգին, Շամխանի հպարտութիւն յայտնեց Հըզպալլայի իրագործած յաղթանակներուն գծով եւ նկատել տուաւ, որ ամերիկեան վարչակարգը անբնական ճիգ պիտի թափէ Պաղեստինի կացութիւնը հանդարտեցնելու, որպէսզի Իրաքը ոմբակոծելու ծրագիրները ի դերու ելլեն: Շամխանի վստահեցուց, որ իսլամական աշխարհը տակաւին կրնայ եւ ունի արժանիքներ ու միջոցներ՝ դուրս գալու նման պայթուցիկ փուլէ մը:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԿԱՍ Կ'ԸՆԵՆ ՓՈԼԻԿԼՕԹ ԶՈՒՃԻ ԵՐԱՆԱԿԱՐՏՆԵՐԸ
«... 4'աշխատիմ որպէս ոսկերչական կադապրոն Պուրճ Համուտի մէջ: Եւրոպի Փոլիկ-թիթ եւ ընկերներէն աւելի կը գնահատուիմ եւ կը վարձատրուիմ...»:
ՍԱԳՕ ԵԱՆԵՐԵԱՆ

ՄԱՀԱԶԴ
Հ. Յ. Դ. Աղբալեան կոմիտէն կը գուծէ իր շրջանի հաւատարմ ընկերներէն՝
ԳԵՈՐԳ ՅԱԿՈԲ ԱՐԱՊԵԱՆԻ
մահը:

ՄԱՀԱԶԴ
Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի վարչութիւնը խոր ցաւով կը գուծէ իր մասնաձ իւղի անդամներէն՝
ԳԵՈՐԳ ՅԱԿՈԲ ԱՐԱՊԵԱՆԻ
մահը:

ՄԱՀԱԶԴ
Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի վարչութիւնը խոր ցաւով կը գուծէ իր մասնաձ իւղի անդամներէն՝
ԳԵՈՐԳ ՅԱԿՈԲ ԱՐԱՊԵԱՆԻ
մահը:

ՄԱՀԱԶԴ
Տիկին Մարո Արապեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Արապեան
Տէր եւ տիկին Անդրանիկ Արապեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Հայկ Արապեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սիմոն Պարուտի եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ժորժ Տարուիչ եւ զաւակունք
Տիկին Լիզա Եփրեմեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մանուկ Արապեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Կարո Արապեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Ժորժ Արապեան եւ ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուծեն իրենց ամուսնոյն, հօր, զաւակին, եղբոր եւ հարազատին՝

ԳԵՈՐԳ ՅԱԿՈԲ ԱՐԱՊԵԱՆԻ
(Ծնեալ՝ 1961ԻԳ)
մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 22 Օգոստոս 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 23 Օգոստոս 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, Անթիլիաս:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին հօր՝ Յակոբ Արապեանի բնակարանը, Անթիլիաս, Երեւանեան շէնքեր, պլոք 2, 2րդ յարկ, Շաբաթ 24, Կիրակի 25 եւ երկուշաբթի 26 Օգոստոսին:

ԴԵՍՊՈՒՆ ՊԵՐՈՒՆ ԵՍԱԿՅՈՒԹԻՆՆԵՐ ՈՒՆԵՑԱԲ ԾԵՅՆ ԲԱՊՊԱՆԻ ԵՒ ԾԵՅՆ ԲԱՊԱԼԱՆԻ ՎԵՏ

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլ երէկ այցելեց հանրապետութեան միւֆթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապանիի եւ Շիիներու Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւֆթի շէյխ Ապտէլ Ամիր Քապանիի:

Հանդիպումներուն ընթացքին Պէթըլ շեշտեց, որ Ուաշինկթըն քալլ առ քալլ պիտի հետեւի եւ ջանք պիտի չի նայէ Միջին Արեւելքի խաղաղութեան բնակցութիւններուն լուծումը մը գտնելու համար, պայմանաւ որ լուծումը ըլլայ արդար, ՄԱԿի օրէնքներուն համապատասխանող, Մատրիտի վեհաժողովին սկզբունքներուն համաձայն եւ հիմնուած ըլլայ Պէյրութի մէջ Արաբական Լիկայի վեհաժողովին որոշումներուն վրայ:

ԲԱՊՊԱՆԻ ՎԵՏ
Միւֆթի Քապանիի հետ հանդիպման ընթացքին Պէթըլ շեշտեց, որ Լիբանանի մէջ համայնքային դրութեան բարեկարգումը:

ԲԱՊԱԼԱՆԻ ՎԵՏ
Միւֆթի շէյխ Քապանիի հետ հանդիպումին:

ԵՐԻՏՐԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՐԳԱԽՈՐՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԱԸ ՊԻՏԻ ԿԱԶՄՈՒԻ

Պետական պաշտօնէութեանց գործունէութեան հսկող պետական նախարար Տուատ Սաատ երէկ հրապարակեց թիւ 456 օրինագիծը, որուն հիմամբ պիտի կազմուի յանձնախումբ մը՝ կարգադրելու համար երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան աշխատանքները. յանձնախումբին պիտի նախագահէ նշեալ նախարարութեան ընդհանուր տնօրէն Չայտ Խիամէ:

Յանձնախումբին արտօնուած է դիմել ռեւէ փորձառու անձնաւորութեան, վերադասարեւելու համար նախարարութեան աշխատանքները: Յանձնախումբին տրուած է մէկ ամսուան պայմանաժամ՝ իրագործելու համար այս բոլորը:

ՄԱՀԱԶԴ
Տիկին Այտա Թաշճեան եւ զուտորբը՝
Լուսինէ, Ռոզալին եւ Դանիա
Տիկին Լուսին Թաշճեան
Տէր եւ տիկին Յակոբ Վեգիբեան
Տէր եւ տիկին Գրիգոր Սեմերճեան եւ զաւակունք
Տիկին Էլիզ Թաշճեան
Տէր եւ տիկին Յակոբ Թաշճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վարդգէս Պոյաճեան եւ զաւակունք
Տիկին Լիզա Վեգիբեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Րաֆֆի եւ Սիւզի Սեմերճեան
Եւ զաւակունք

ՍՈԿՐԱՏ ԿԱՐԱՊԵՏ ԹԱՇՃԵԱՆԻ
(Ծնեալ՝ Պէյրութ, 1945ԻԳ)
մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 10 Օգոստոս 2002ին, Ռիատ, Մէրուտական Արաբիա, ինքնաշարժի արկածի հետեւանքով:
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 24 Օգոստոս 2002ին, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, Ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ռապիէ, 9րդ փողոց, «Մուսիր Մանսուր» շէնք, 3րդ յարկ, հեռ. 04-416776, 03-363563 եւ 04-524526 Կիրակի 25 եւ երկուշաբթի 26 Օգոստոսին, իսկ հանգուցեալին ծնողքին բնակարանը՝ Քախալէ, Երեքշաբթի 27 եւ Չորեքշաբթի 28 Օգոստոսին:
● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել «Թոշնոց Բոյն»ին:

պուսիս Պէթըլ անդրադարձաւ բազմաթիւ հարցերու, ինչպէս՝ պաղեստինեալարայի-եան տագնապին, որուն մասին միւֆթին ըսաւ, որ Մ. Նահանգներ որեւէ վարկեանի կրնան լուծել այդ հարցը, շեշտելով, որ Ուաշինկթընի շահերը արարներուն մօտ կը գտնուին եւ ոչ՝ Եւրալի:

Իրաքը ոմբակոծելու ամերիկեան հաւանական ծրագիրին անդրադարձաւ իր հարցումով, միւֆթի Քապանի հարց դրաւ, որ Սատամ Հիւսէյնը հաշտեցնողը եւսրայի-ի համար ո՞ր է իրաքի ժողովուրդին յանցանքը եւ ի՞նչու վարագործեմք վարկի անոր հետ:

Իսլամութեան մասին խօսելով, Քապանի նշեց, որ իսլամութիւնը սիրով կրօնք է եւ իսլամ հոգեւոր պետեր դատապարտած են Մ. Նահանգներու դէմ կատարուած 11 Սեպտեմբերի ահաբեկչական յարձակումներէն ետք եւ մարտը, որ Մ. Նահանգներ աւելի պզուշ ըլլան իրենց տեղեկատուութեան մէջ, առաջը առնելու համար աշխարհի բոլոր իսլամներուն մօտ իրենց հանդէպ ատելութեան հունտեր սերմանելէ:

ԿՈՒՂՈՒԻ
● Ըստատուութիւն մը Պուրճ Համուտի մէջ կարիք ունի հաշուապահուիկի մը. դիմել՝ հեռ. 03-273418:
ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
● Վերգին Շիլլորտըմեանի մահուան առթիւ, Մարգարեան ընտանիք 30 ամ. տղար՝ ԼՕԽի «Աստղիկ» մասնաձիղին:
ԿԸ ՓՆՏՈՒՄ
● Ընտանիքի մը որդեգրած աղջկն էմ, ծնած՝ 11 Ապրիլ 1970, ԿԵՄ Կիւնցիւնց: Կը փնտրուի ծնողքը եւ ինձմէ մեծ քոյրերը եւ եղբայրները (Պուրճ Համուտէն): Հեռ. 01 - 258308, երեկոյեան ժամը 8:00էն 10:00:

ՏԵՍԱԿԵՏ
ԱՍԵՆ ՄԱՐԳ ՆԱԽ ԻՐ ԴՐԱՆ ԱՌՋԵՒ ՊԵՏՔ Ե ԱՒԼԷ
(ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԵՋ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՆՐԱՔՈՒՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ)
Տասը օր առաջ, երբ Լեոնային Ղարաբաղի մէջ նախագահական ընտրութիւններ տեղի կ'ունենան, Արապիճան կոկորդը պատրուելու գնով կ'աղաղակէր. թէ անընդունելի ու ապօրինի է ընտրութիւն կայացնել երկրի մը մէջ, որ այսպէս ըսած՝ միջազգային ճանաչում չունի:

Աշխարհը տեսաւ, սակայն, որ Լեոնային Ղարաբաղի ժողովուրդը ոչ միայն անտեսեց բարձրացած աղմուկը եւ ընտրեց իր նախագահը, այլեւ արեւմտեան դէտերու իսկ հաստատուով՝ կայացուց ընտրութիւններ, որոնք ժողովրդավարութեան բոլոր սկզբունքներուն համապատասխան ընթացան եւ արժանացան հանրային կարծիքին գնահատումին, ինչպէս նաեւ միջազգային ընտանիքին միաժամանակ հիացման ու պարմանքին: Իսկ հաւար փոքրացած Արապիճան բնականաբար յաջողոր օրն իսկ լոնց: Կրնա՞ր այլ բան ընել:
Բայց վարմանային հոն է, որ վաղը Արապիճանի մէջ տեղի պիտի ունենայ հանրաքուէ, որուն արդիւնքին յոյսին տակ (բնականաբար «այո» պիտի տիրապետէ) փոփոխութեան պիտի ենթարկուի եօթ տարուան կեանք ունեցող (1995) Սահմանադրութիւնը, որուն մէկ յօդուածին համաձայն՝ իրաւունք պիտի տրուի նախագահին՝ ընտրելու իր յաջորդը: Իսկ այս պարագային գաղտնիք է արդեօք, թէ 79ամեայ Հայտար Ալիեւ նախագահութեան ժամբան կը հարթէ իր պատկին՝ Իլ-համի դիմաց:
Հակակական դիպուկ սասցուածք մը ունինք, որ կ'ըսէ. մարդ իր աչքին գերանը չի տեսներ, բայց դիմացինին աչքին շիւղը կը տեսնէ: Այլ խօսքով, Պաքու փոխանակ առարկելու Լեոնային Ղարաբաղի ընտրութեանց համար, լաւ կ'ընէ, որ անկէ դաս ստանայ ժողովրդավարութեան իմաստով: Լեոնային Ղարաբաղ փաստեց, թէ կարգին ժողովրդավար երկրի է եւ գիտէ ամենայն գիտակցութեան հեղափոխութեան թափանցիկ ընտրութիւններ կատարել, որուն շնորհիւ բնականաբար իրաւունք կ'ունենայ շրջ դարու քաղաքակրթութեան աշխարհին մաս կազմելու: Բայց ինչ որ տեղի կ'ունենայ Արապիճանի մէջ, բառին ամբողջական առումով ֆէտտալիզմ է, որուն վրայ քաղաքակրթ աշխարհը վաղորդ տապալաբար դրած է: Յայտնապէս Արապիճան չ'ուրբ, աւելի ճիշդ՝ չ'ունի կարողութիւնը ընկալելու նորօրոյ քաղաքակրթ երկիրներու վարչակարգի մեքանիզմը եւ կ'ուրբ դեռ խարխալել 19րդ դարու աւատապետական իւրաքանչիւր մէջ: Անշուշտ ամէն ժողովուրդը պատ է իր սեփական ճակատագրի տնօրինումին մէջ, բայց այդ պարագային նաեւ իր կարգին ստիպւած է ուրիշին հարցերուն միջամուխ չըլլալ ու առնուապէս պնդել ըլլալ եւ ուռուցիկ յայտարարութիւններ չկատարել:
Ուրեմն պէտք կ'ա՞յ յիշեցնելու ռուսական իմաստուն առածը, որուն համաձայն՝ նախ ամէն մարդ իր դրան առջեւ պէտք է ալլէ...

ԵԹԷ...
● Միջնակարգի դասարաններու աշակերտ ես, կրնա հետեւել ցախապատրաստական (B. P.) դասընթացքին:
● Ըստած ես ՊԵՏՕՎԷԻ դասարան, կրնա հետեւել ընկեր Պաքալօրայի դասարանին:
● Ունիս ՊԱՍԵԼՕՐԵԱ, կրնա հետեւել ՓՕԼԻԿԼՕԹԻ համալսարանական դասընթացքին:
● Մատչելի կրթաթոշակ, առաւօտեան եւ երեկոյեան դասընթացք, ֆրանսերէն եւ անգլերէն բաժնեք:
ՓՈԼԻԿԼՕԹ ԶՈՒՃ: Հեռ. 01 - 251320
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ Պ. ՇԵՄՏԵՍԵԱՆ

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.
National Air Conditioner
Պուրճ Համուտ - Զաղաքակրթութեան հրապարակ ՀԵՌԱԶԱՅՆՆԻՆ՝ 01-241000
2րդ մուտք, Սաքըր Պաքըլըն: Կառատուը պարտաւորուած:

Քհաբազ-Օրիէնթ Պլուս
Travel & Tourism
Varna
Starting from 350\$
Including R/7 ticket, 8 days bungalow, transfers, guides, Visa & taxes not included
Cyprus 3 days 185 \$
Boat trip to Cyprus & Greece 380 \$
01.900598, 901598 - 03.258336, 256254
www.orientplus.com

ՔԱՐԻՄ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՏԻ ԵՒ ՔԸՐՆԵԹ ՇԱՅՈՒՆԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԻՆ ՄԻՋԵՒ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Փաղանգաւոր Կուսակցութեան ղեկավար Քարիմ Բագրատունի երէկ մաղթեց, որ նախագահ Վոր. Էմիլ Լախուտի եւ Քըրնէթ Շախուանի հանդիպումին միջեւ երկխօսութիւնը ըլլայ բարենպաստ՝ ազգային միասնականութեան ամրապնդումին եւ իսլամ-քրիստոնէայ խաղաղ ապրելակերպին համար:

Քըրնէթ Շախուանի հանդիպումին եւ նախագահ Լախուտի միջեւ տեսակցութեան նախօրեակին, Բագրատունի կատարեց երեք բացառաւոր տուներ:

Ա. Ուղեղը կը յաղթէ բնապահին եւ չափաւորութիւնը՝ ծայրայեղութեան, Բ. Քըրնէթ Շախուանի հանդիպումին կողմէ նախագահ Լախուտի հանդէպ ցուցաբերուած մօտիկութիւն, Գ. Հանդիպումը պատրաստ վիճակի մէջ կը գտնուի երկխօսութեան, ինչ որ ցոյց կու տայ, թէ նախագահ Լախուտ երբեք պատասխանատու չէր Քըրնէթ Շախուանի հանդիպումի հետ երկխօսութեան հղովոյթի ստեղծման:

Անդրադառնալով երկու օր առաջ իսլամա-Շարք՝ էջ 10

ՇԵՏԱԲԵՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԸ՝ ՆԱԽԱԳԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ. ԶՕՐ. ԼԱՇՈՒՏ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ԳՐԱԿԷ ՊԱՐԱԳԼՈՒՄԻ ԴԻՐԸ

Օգոստոսի սկիզբը, «Լիբանանեան կարծիքը» վիճակագրական կեդրոնը կատարեց ուսումնասիրութիւն մը, որուն մասնակցեցան 1070 լիբանանցիներ: Ըստ վիճակագրութեան արդիւնքներուն՝ 1070ին 38,22 առ հարիւրը կ'ուզէ, որ նախագահ Լախուտ վերընտրուի: Անոնց 31 առ հարիւրը Լեռնալիբանանէն են, 23 առ հարիւրը՝ հարաւէն, 21ը՝ Պէյրութէն, 76ը՝ Նապաթիէն, 75ը՝ հիւսիսէն իսկ 64ը՝ Պեքալէն:

Վիճակագրութեան մասնակցողներուն 16,73 առ հարիւրը իր փափաքը կը յայտնէ Նեհիպ Լախուտը նախագահ տեսնելու, 7,48ը՝ Սլէյման Ֆրենժիէն, 6,26ը՝ Պուրոս Հարպը, իսկ 5,42 առ հարիւրը չուզեց իր կարծիքը տալ: Ամին Ժեմալէի նախագահ ընտրուելուն համար ծիծառնուեցաւ միայն 5,14 առ հարիւրը, Միշէլ Մուսի՝ 4,67 առ հարիւրը, Ժան Օպէյտի՝ 2,99 առ հարիւրը, իսկ Միխայիլ Տահէրի՝ 2,62 առ հարիւրը:

Պատասխանելով այն հարցումին, թէ անոնք ի՞նչպէս կ'ուզեն, որ ընտրութիւնները կայանան, 72,36 առ հարիւրը ըսաւ, թէ պէտք է հանրաքուէ կատարուի, 23,46ը՝ նախընտրեց խորհրդարանական դրութեամբ ընտրութեամբ կայացումը (Նեհիպի նման), իսկ 0,19 առ հարիւրը չուզեց իր կարծիքը փոխանցել:

Կառավարութեան փոփոխութեան մասին 75,89 առ հարիւրը համաձայն գտնուեցաւ, 23,74 առ հարիւրը չուզեց փոփոխութիւն, իսկ 0,37 առ հարիւրը չպատասխանեց: Վիճակագրութիւնը ցոյց տուաւ, թէ մաս-

նակցող 1070ին 50,6 առ հարիւրը համակարծիք է նախագահ կան կեդրոնը կատարեց ուսումնասիրութեան, 15,61 առ հարիւրը կը նախընտրէ Հիւսէյն Հիւսէյնի ընտրութիւնը, 10,65ը՝ ընտրութիւնը, իսկ 6,92 առ հարիւրը իր յօրակցութիւնը յայտնեց Նաւէր Բանտիլի:

Ըստ վիճակագրութեան՝ 31,03 առ հարիւրը Ռաֆիք Հարի-

րին կ'ուզէ իրեն վարչապետ, 25,79 առ հարիւրը՝ Ուալիտ Պըն թալալը, 21,68 առ հարիւրը՝ Սելիմ Հըսըր, իսկ 4,77 առ հարիւրը իր կարծիքը չտուաւ: Օմար Քարամէ արժանացաւ 3,93 առ հարիւրին զօրակցութեան, Նամիպ Միքաթին՝ 3,83, Սոհալմա Սաֆաթին՝ 2,99, Թամամ Սալամը՝ 2,06, իսկ Ատնան Ատտուը՝ 1,78 առ հարիւրին:

ՀՆԴԿԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄՕՏ

Հնդկական բանակի փոխ նախագահ գործադիր տնօրէնը երէկ զինուորական պատուիրակութիւն մը գլխաւորելով այցելեց պաշտպանութեան նախարար Նալի Հըրաուրի եւ բանակի ընդհանուր հրամանատար գործադիր Սլէյման Սլէյմանի, ինչպէս նաեւ հարաւի մէջ կայունութեան հսկող Ֆինիլի ուժերուն մէջ Հնդկական ուժերու ջոկատին:

Երբեք մէջ Հըրաուրի հետ հանդիպումին գործադիր տնօրէնը կողմնակալ էր Հնդկաստանի Լիբանան երկրորդ շրջանի յարաբերութիւններու բարելաւման, յատկապէս երկու բանակներուն միջեւ փորձառութիւններու բաժնեկցութեան:

Նախարար Հըրաուրի անդրադարձաւ նաեւ հարաւի մէջ Հնդկական ուժերու ծառայութեան եւ հարաւեցիներուն հանդէպ ցուցաբերած անոնց մարդասիրական վարմունքին:

Ականագրեման աշխատանքին մասին խօսելով Հըրաուրի խնդրեց, որ Հնդկաստան նաեւ ժամանակակից աշխատանքին՝ Լիբանանի ընծայելով ականները «մատնանշող» յատուկ սարքեր, ինչպէս նաեւ այդ աշխատանքին համար յատուկ տարազներ:

Չօր. Քարամէ անդրադալով մը ունեցաւ նաեւ գործադիր տնօրէնը Հնդկաստանի միասնակցութեան առնչուող հարցեր:

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ
ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ
ՁԵՐ ԸՆԴԱՋԱՏՆԵՐՈՒՆ
ԱՐԱ ՔԷՔԷՃԵԱՆ ՀԱՍՏ.

Տարեդարձի, անուանակոչութեան, նշանակութեան եւ ամուսնութեան տարեդարձի:

Աճծին անունով, մականունով եւ ընտանեկան նկարներով, կէս ժամող VIDEO CLIPներ

ԲՈՒՐՈՒ ԱՌԻՅԵՐՈՒ ՁԵՐ VIDEO
ԵՐԻՋՆԵՐԸ ԿԱՐՁԱՆԱԳՐԵՔ CDԻ ԿՐԱՅ

Հասցէ. ԱՐԱ ԶԷՔԷՃԵԱՆ ՀԱՍՏ.
Պուրճ Համուտ, Բաղաքապետարանի հրապարակ, հեռ. 01-261696 եւ 03-250518:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

22 Օգոստոսի լիբանանեան օրաթերթերը տեղական լուրերու կարգին կարեւորութեամբ անդրադարձած են Հ.Յ.Ռաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութեան Հայէպ այցելութեան եւ նախագահ Պաշար Ասատի հետ տեսակցութեան. իրենց խորագիրներուն մէջ «Տիար», «Սաֆիր», «Քիֆահ Արապի», «Լիուա», «Տէլի Սթար», «Մուսթափապա», «Պայրաք» օրաթերթերը շեշտած են, թէ Կեդրոնական Կոմիտէի հետ տեսակցութեան ընթացքին նախագահ Ասատ շեշտած է, թէ պէտք է կառչած մնալ օրինականութեան եւ պետական հաստատութիւններուն, իսկալ յարաբերութիւններ հաստատել երկու երկիրներուն եւ անոնց ժողովուրդներուն միջեւ՝ ի շահ երկու երկիրներուն եւ անոնց ժողովուրդներուն: Նշուած է նաեւ, թէ պէտք է պահպանել Թաէֆի համաձայնագրի ոգին եւ հիմնական սկզբունքները, յարգելով լիբանանեան համայնքներուն բոլոր իրաւունքները: Ըստ թերթերուն, հետեւեալ կէտերը հիմը կը կապեն Լիբանանի մէջ Սուրիոյ վարած քաղաքականութեան:

Տեղական այլ իրադարձութիւններու կարգին «Տիար» գրած է. «նախագահ Լախուտ վաղը կ'ընդունի Քըրնէթ Շախուանի հանդիպումին պատուիրակութիւնը՝ առանց արժարժուելիք նիւթերուն կամ ներկայանալիք անձերուն մասին նախապայմաններ դնելու»:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, նախագահ Լախուտ եւ վարչապետ Հարիրի երկուստեք օր պիտի հանդիպին, նախքան պիտի ընկալեն քննարկման յատկացում կառավարութեան նիւսերը:

«Սաֆիր» նշած է, թէ նախարար Սիւհրապ յայտարարեց. նախագահ Լախուտ համաձայն գտնուեցաւ պիտուելի նախագիծին. պիտուելի բացը կը նախատեսուի 35 առ հարիւր, բարձրագոյն տոկոսը՝ 2.5 - 3 առ հարիւր, իսկ մուտքերու յաւելումը՝ 600 միլիարդ լ. ոսկի. ծախսերու նուազումը կը կեդրոնանայ պաշտպանութեան եւ ներքին գործոց նախարարութեան, ինչպէս նաեւ վարչապետարանի, պետական խորհուրդներու եւ սնտուկներու ծախսերուն վրայ:

«Տիար»-ի համաձայն, Ուալիտ Ժամալաթ կը յայտարարէ, որ ծայրայեղական կողմեր պիտի մեկուսացուին, ինչպէս որ Ֆրանսայի մէջ Լը Փէնը մեկուսացուեցաւ Աշին ու Չախին միացեալ ճիգերով:

Միջազգային իրադարձութիւններու կարգին, թերթերը հրատարակած են Իրաքի կողմէ ներկայացուած Ապու Նիտալի մահուան մասնաւոր տեսութիւնները:

«Նախար» նշած է, թէ Իրաքի ապահովական սպասարկութիւնը կը վստահեցնէ, որ Ապու Նիտալ անձնասպան եղած է նախքան իր ձեռքաւորութիւնը: Ապու Նիտալի ղեկավարած կապակերպութիւնը կը հերքէ այս հաստատումը եւ եղածը ծրագրուած սխաբեկում կը նկատէ. Ճորճ Պուշ կասկածով կը մօտենայ պաղեստինցի ղեկավարին սպանութեան լուրին, իսկ Թեհրան կը հերքէ, որ ան իր հողերէն անցած է:

«Տիար»-ի համաձայն, հետեւելով Երոպայի օրինակին, Քանադա կը շեշտէ, թէ պիտի չմասնակցի Իրաքի դէմ պիստոնակալ գործողութիւններուն:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ բրիտանական «Ֆայնէնշըլ Թայմզ» թերթին համաձայն, 11 Սեպտեմբերի յարձակումէն ետք սեւուցիները շուրջ 200 միլիար տոլար քաշած են Միացեալ Նահանգներէն եւ այդ գումարները փոխանցած՝ երոպական, ճափոնական եւ միջին արեւելեան շուկաներուն, որոնց կարգին՝ լիբանանեան դրամատուներուն:

Պաղեստինեան հարցին անդրադառնալով, «Քիֆահ Արապի» նշած է, թէ Արիէլ Շարոն հեգնանքով կ'արտայայտուի պաղեստինցիներուն հետ կայացած ապահովական համաձայնութեան մասին եւ կ'ըսէ. եղածը պարզապէս Բեթղեհէմի հրապարակէն քանի մը քրահապատներու հեռացումն է:

Ըստ թերթին, Ճորճ Պուշ «պատերապմական դաւիթով» նիւսեր կը գումարէ իր ազարակին մէջ. Թէլ Ալի իր պիստոնակալ խարխիւները կը դնէ Ռաշնակցութեան տարմարութեան տակ:

Թերթերը լուսարձակի տակ առած են երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի եւ նախագահ Վոր. Էմիլ Լախուտի հանդիպումը: Այցելութեան նպատակն էր նախագահի հրաւիրել 28 Սեպտեմբերին կայանալիք «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի բացման հանդիսութեան:

Իրենց ներքին էջերով թերթերը արժարձած են Լիբանանի մէջ մոթորսիքի թերթերու երթելի կատեցման հարցը:

«Նախար» օրաթերթը գրած է, թէ 26 Օգոստոսին տեղի պիտի ունենայ Երկրագունդի Երկրորդ Վեհաժողովը, որուն պիտի մասնակցին 60 պետութիւններու նախագահներ եւ 40 հազար անձեր՝ աշխարհի չորս կողմերէն: Այս առիթով թերթերը յատուկ էջ մը նուիրած են Լիբանանի ընկերային եւ կենսոլորտային իրավիճակին. ան գրած է, թէ 10 տարի անցած է երկրագունդի առաջին վեհաժողովէն, սակայն աշխարհի մէջ աղքատութիւնը կ'աւելնայ, իսկ կենսոլորտի վիճակը կը վատթարանայ:

23 ՕԳՈՍՏՈՍ - 29 ՕԳՈՍՏՈՍ 2002

ՄԵԿՆԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
«ԵՐԿԻՐ» ՇԱՅՈՒՆԱԹԵՐԹԻ

Էջ 3. «Դաշինքներ դաշինքի մէջ» յօդուածը կ'անդրադառնայ Հայաստանի «ճախ ուժեր»-ու ճակատին վրայ տեղի ունեցող նախընտրական իրադարձութիւններուն, ի մասնաւորի նախագահական եւ պատգամաւորական ընտրութիւններու նախօրեակին ընտրական դաշինքներու հաստատման երեւոյթին:

Էջ 5. Հայաստանի տնտեսական ծանր կացութիւնը կը մնայ «Երկիր»-ի հետաքրքրութեան առարկան: «Յաւելեալ ներդրումներ՝ գարգացմանը» յօդուածը կը խօսի արտաքին ուղղակի ներդրումներու հիմն մասին, որ կը պահանջէ ներդրումներու ազգային դրութեան ձեւաւորում:

Էջ 9. «Կալանավարում բացառուած չէ խռովութիւնը». մահապատիժի դատապարտուածներուն հարազատները կը բողոքեն Հայաստանի քրեական նոր օրենսգրքին մէջ մահապատիժի դրութեան պահպանման դէմ:

Էջ 10. Հայաստանի համալսարանական կեանքը եւ ի մասնաւորի համալսարանի ընդունելութեան ընդունելիները ընդարկուած գլխաւոր միւթ «Կընդունուեմ չեմ ընդունուի» յօդուածին մէջ:

Էջ 11. Սշակութային բաժնով «Երկիր» իր «Վեր յառնող Չուարթինգ» յօդուածով կ'անդրադառնայ վերջէս «Լիբանի» հիմնադրամի նիւթական միջոցներով Չուարթինգի տաճարին մէջ տեղի ունեցող վերանորոգման աշխատանքներուն:

Էջ 12. Արցախեան ազատագրական պայքարի նուիրեալներէն Աշոտ Ղուլեան կը ներկայացուի «Ասուպ հարձած բեկորը» գրութեան մէջ:

Panasonic

13 Models to choose from

DVD HOME THEATER SYSTEMS
That just fit for you!

DVD-RV32 \$200
DVD-V Player, DVD-R / VCD / CD / CD-R/RW / MP3
Dolby Digital

DVD-XV10 \$280
DVD-V Player, DVD-R / VCD / CD / CD-R/RW / MP3
DTS / Dolby Digital

DVD-CV52 \$280
5 DVD-V Changer, DVD-R / VCD / CD / CD-R/RW / MP3
DTS / Dolby Digital

DVD-RA61 \$465
DVD-AV Player, VCD / CD / CD-R/RW / MP3
DTS / Dolby Digital 5.1

DVD-RA71 \$510
DVD-AV Player, VCD / CD / CD-R/RW / MP3
DTS / Dolby Digital 5.1

DVD-PV40 \$425
Portable DVD-V Player
VCD / CD / CD-R/RW
Dolby Digital

DVD-LV60 \$925
Portable DVD-V Player
VCD / CD / CD-R/RW
Dolby Digital

DVD-LA95 \$1,200
Portable DVD-AV Player
VCD / CD / CD-R/RW
DTS / Dolby Digital

Technics

SC-HT75 \$495
5 DVD-V Receiver
DVD-R / VCD / CD / MP3 / CD-R/RW
400W RMS
DTS / Dolby Digital

SC-DM3 \$510
DVD-V Receiver
DVD-R / VCD / CD / MP3 / CD-R/RW
200W RMS
DTS / Dolby Digital

SC-DT100 \$575
DVD-V Receiver
DVD-R / VCD / CD / MP3 / CD-R/RW
220W RMS
DTS / Dolby Digital

SC-DV280 \$575
5 DVD Mini Compo
DVD-V / VCD / CD / CD-R/RW
3000W PMPO (360W RMS)
Dolby Digital

SC-DK10 \$560
5 DVD Mini Compo
DVD-V / VCD / CD / MP3 / CD-R/RW
3200W PMPO (390W RMS)
Dolby Digital

10% VAT should be added to the above prices.

For more info: Tutunjian Corp. S.A. (04)712129/130, 711967 (03)243203 Fax: (04)712177 E-mail: TTC@cybernet.net.lb

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԸ ԹՐՔԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՄԷՋ

«Թըբեյ Տէյի Նիուզ» թերթը կը հաղորդէ, որ կրթական յառաջիկայ տարեշրջանին Գալստիանոս Գրիգորի 5րդ եւ 7րդ, ինչպէս նաեւ Երկրորդական բոլոր դասարաններու ծրագրերը մէջ պիտի ներկայացուին «Ենթադրեալ» Հայկական Յեղասպանութեան եւ յոյններուն ու ասորիներուն վերաբերող նիւթեր: Թերթին համաձայն, աշակերտներուն տեղեկութիւններ պիտի տրուին «Հայկական Յեղասպանութեան պնդումներուն» եւ, ըստ Լօզանի Դաշնագրի, Թուրքիոյ մէջ հայերու իրավիճակին մասին:

Թերթը կը տեղեկացնէ նաեւ, որ այս ծրագիրը իրականացնելու համար 110 ուսուցիչներ պիտի հետեւին յատուկ դասընթացներու, որոնք տեղի պիտի ունենան Անգարայի մէջ:

Վարժարաններուն մէջ օգտագործուած դասագիրքը պիտի ըլլայ Անգարայի համալսարանի դասախօս փրոֆ. Եաւուզ Երքանի պատրաստած «Օսմանեան կայսրութեան կարգ մը հարցերու ցուցակ մը յայտ» գիրքը:

ՆԱԵՒ ՊԵՐՊԵՆՔԻ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԷՋ

Իր կարգին, Միացեալ Նահանգներու «Տը Տէյի Նիուզ աֆ Լուս Անճլըս» թերթը կը տեղեկացնէ, թէ յառաջիկայ տարեշրջանին Պերպերի երկրորդական բոլոր վարժարանները հայոց պատմութեան դասընթացները պիտի ընդգրկեն կրթական իրենց ծրագրերուն մէջ: Թերթին համաձայն, Հայ Դատի Յանձնախումբը արդէն իսկ Պերպերի երկրորդական վարժարաններուն տրամադրած է հայոց պատմութեան դասագիրքեր, որոնք պատրաստուած են Քալիֆորնիոյ համալսարանի փրոֆ. Սիմոն Փայլայի կողմէ: Դասագիրքներուն մէջ ներկայացուած է նաեւ Հայկական Յեղասպանութիւնը: Թերթը կը յայտնէ, թէ Պերպերի 15 հազար աշակերտներէն 1700ը հայեր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԻՒՆ ԲԱՅՈՒՄԸ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԶԷ Կ'ԸՍԷ ՆԱԽԱՐԱՐ ՏՈՂՐՈՒ

«Թուրան» լրատու գործակալութիւնը երկուշաբթի տեղեկացուց, որ Թուրքիոյ պետական նախարար Ռեսաթ Տոզըրու Պաքու իր այցելութեան ընթացքին հերքած է այն լուրերը, թէ Եւրոպական Միութիւնը Թուրքիոյ անդամակցութեան նախապայման դրած է Հայաստան - Թուրքիա սահմանին բացումը: «Ոչ մէկ բան կրնայ վնասել Ազրպէյճանի հետ եղբայրական մեր բարեկամութեան: Թուրքիոյ կեցածքը կը մնայ անփոփոխ: Մինչեւ Ազրպէյճանի ազատագրումը կարելի չէ Հայաստանի հետ յարաբերութիւններ մշակել», ըսած է նախարարը: Նախարարը նաեւ հերքած է այն լուրերը, թէ Պաքու - Թիֆլիս - Էրզրում կազատարին շինութիւնը առնուազան մէկ տարիով յետաձգուած է: Ան ըսած է, որ ընդհակառակն՝ Թուրքիա աշխատանք կը տանի Ազրպէյճանին անցնող կազատարին շինելու: Ան յայտնած է, որ 2004 - 2005 թուականին սկսեալ Ազրպէյճանի կազմում կ'ընդունուի Թուրքիա պիտի փոխադրուին Պաքու - Ճէյհան եւ Պաքու - Էրզրում կազատարներուն միջոցով:

ՌԻՐԵԱԹԱՒԻՆ

ԹՈՒՐՔԻՈՅ ՄԱՐԴԿԱՎԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ՄԱՍԻՆ ԳՐՔՈՅԿ

Արեւելեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Օգոստոս 20ին հրատարակեց «Թուրքիոյ մէջ մարդկային իրաւանց բռնաբարումներու դար մը» խորագրով գրքով, որ կ'ընդգրկէ 20րդ դարուն հարգողուած գանազան լուրեր եւ կը նկարագրէ Օսմանեան թէ Գեորգիանի Թուրքիոյ խօսքի եւ միտքի ազատութեան կաշկանդումի բայերը: Գրքովին մէջ գրուած է. «Թուրքիոյ մէջ 20րդ դարը սկսաւ Օսմանեան կայսրութեան կողմէ փոքրամասնութիւններու եւ ընդհանրու ընդդէմումով: Թուրքիոյ ցեղային հաւաքականութիւնները ամբողջ դար մը ենթարկուեցան հալածանքի, որ կը նպատակադրէր ոչնչացնել կամ պակսեցնել ոչ միայն անոնց քաղաքական ազդեցութիւնը, այլ նաեւ՝ անոնց թիւը եւ, վերապահ, դարձը շարունակել շրջանին մէջ իրենց ներկայութեան փաստը: 20րդ դարու վերջաւորութեան ցեղային հաւաքականութիւններու նկատմամբ Թուրքիոյ ճնշող քաղաքականութիւնը մնաց ի գորու: Կաշկանդումները կը շարունակուին մինչեւ օրս»: Արեւելեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի ատենապետուհի Շարիստան Արտալեան գիրքին մասին խօսելիս Ետքը դիտել տուաւ, որ միջազգային հանրութիւնը պէտք է Թուրքիային պահանջէ վերջ տալ մարդկային իրաւանց բռնաբարումներուն եւ անոր վերաբերու ընթացքին իր գործած ցեղասպանական անմարդկային արարքները:

ԹՐԵԱԿԱՆ ՄԱՍԻՆ

«ԱՐԱՐԱՏԻ ՍԱՌՈՅՑՆԵՐԸ ՀԱԼԻՊ ԿԸ ՍԿՍԻՆ»

Թուրքիոյ արտածողներու խորհուրդը որոշեց Ժամանակէ մը ի վեր սկսած է թրքերէն եւ անգլերէն լեզուներով հրատարակել «Թըբեյ Ռայմ» խորագրով պարբերաթերթ մը: Այս պարբերաթերթին Յուլիս ամսուան թիւին մէջ լոյս տեսած է «Արարատի սառույցները հալի» կը սկսի» խորագրով յօդուած մը: Անստորագիր այս յօդուածը ակնարկ մը կը նետէ Թուրքիա - Հայաստան - Ազրպէյճան յարաբերութիւններուն վրայ եւ Սեպտեմբեր 11ի դէպքերէն ետք կողմասի մէջ արձանագրուած կարգ մը քաղաքականութեանը կը նկատէ երեք երկիրներու յարաբերութիւններու բնականոնացումն ազդանշաններ: Յօդուածին մէջ կը նշուի, թէ հակառակ իր փոքր տարածութեան, Հայաստան մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ Թուրքիոյ համար, որովհետեւ Թուրքիան կասկից ծովուն եւ Միջին Ասիոյ կապող միակ երկաթուղին կ'անցնի Հայաստանէն: Իսկ Թուրքիա Հայաստանի համար ամէնէն կարճ եւ կարելի էր ճամբան է դէպի Եւրոպա եւ Միջին Արեւելք: Յօդուածին մէջ դիտել կը տրուի սակայն, թէ հակառակ վերոյիշեալ երկու կէտերուն, Հայաստան - Թուրքիա սահմանը Լեւոնային Ղարաբաղի տագնապին պատճառով 1993էն ի վեր կը մնայ փակ:

Յօդուածագիրը կը խօսի նաեւ 1991ի Հայաստանի անկախութեան, Լեւոն Տէր Պետրոսեանի նախագահութեան եւ Լեւոնային Ղարաբաղի գրաւումին մասին: Ան դիտել կու տայ, որ անստեղծ է «Արարատի սառույցները հալի» կը սկսի» խորագրով յօդուածը: Թուրքիոյ տնտեսական հարցերը: Յօդուածագիրին համաձայն, Լեւոնային Ղարաբաղի մէջ գինադուլի հաստատումէն ետք 350 հազար հայեր եւ 700 հազար ազերիներ ստիպուած եղած են իրենց հայրենիքը լքելու: Այս, իրեն Ազրպէյճանի գորակցութիւն, Թուրքիա փակած է Հայաստանի հետ իր սահմանը եւ Հայաստանի բնակչութիւնը 3 միլիոնէն նուազած է 1,8 միլիոնի, երկրին մէջ տիրող անգործութեան պատճառով: Յօդուածագիրը Լեւոն Տէր Պետրոսեանի եւ Ռուպիկ Քոչարեանի նախագահական տարիներուն եւ անոնց դիմաց գրաւած տնտեսական դժուարութիւններուն մասին պատմական կարճ ակնարկ մը կը կատարէ: Այս ան կ'անդրադառնայ Թուրքիա - Հայաստան - Ազրպէյճան յարաբերութիւններուն նկատմամբ երկու նախագահներու կեցողութեանը: Յօդուածագիրը դիտել կու տայ, որ Տէր Պետրոսեան հայ - թրքական յարաբերութիւններու բարելաւման համար կարեւոր քայլ մը առաւ, երբ ընդունեց երկու երկիրներուն միջեւ առանց նախապայմանի յարաբերութիւններ մշակել եւ Յեղասպանութեան հարցը քաղաքական արգելք չնկատել: Յօդուածագիրին համաձայն, այս մէջ:

կը կարեւոր փոփոխութիւն մըն էր հայկական քաղաքականութեան մէջ, սակայն ան զարկ տուաւ Տէր Պետրոսեանի դէմ ընդդիմութեան, որ մէ օգտուեցաւ Քոչարեանի իշխանութեան գալու համար: Յօդուածագիրը կը նշէ, որ Քոչարեանի ինքնին չէ հետաքրքրուած Յեղասպանութեան հարցով, սակայն օրին քաղաքական նպատակներով օգտագործած է զայն: Ան դիտել կու տայ, որ Տէր Պետրոսեանի հեռացումին մէջ կարեւոր դեր խաղացած է նաեւ Թուրքիա՝ չընդառաջելով անոր մերձեցման փորձերուն: Յօդուածագիրը կը յայտնէ, որ Քոչարեան երկու տարի ի վեր Հայտարար Ալիեւի հետ կը վարէ բանակցութիւններ, որոնց բովանդակութիւնը չի հրապարակուի: Այս յօդուածագիրը կը կատարէ կողմասի ներկայ քաղաքական կեանքին մասին վերլուծում մը: Ան կը յայտնէ, որ Միացեալ Նահանգներ վերջերս, Ռուսիոյ հաւանութիւնը ստանալէ ետք, դիմումներ դրկեցին վրաստան, այն պատճառով, թէ «Քալիֆորնիա» զինեալներ պայատանած են շրջանին մէջ: Յօդուածագիրը կը նշէ, սակայն, որ այս քայլին դիմելու Միացեալ Նահանգներու իսկական նպատակն է շրջանի ու ժամանակին անվտանգութիւնը ապահովել: Ան դիտել կու տայ, որ կողմասի մէջ ամերիկեան ներկայութիւնը պատճառ պիտի դառնայ, որ Ռուսիա չկարենայ Հայաստանը պաշտպանել: Ըստ յօդուածագիրին, վերոյիշեալ պատճառներով Թուրքիա - Հայաստան - Ազրպէյճան յարաբերութիւնները այժմ շատ կարեւոր հարց դարձած են Միացեալ Նահանգներուն համար: Ան կ'եզրափակէ, որ Ճէմ - Օսկանեան, ինչպէս նաեւ Քոչարեան - Ալիեւ հանդիպումները կը ձգեն այս սպաւորութիւնը, թէ Արարատի սառույցները սկսած են հալիլ: Վերջին բաժինին մէջ յօդուածագիրը կը բացատրէ կողմասի մէջ խաղաղութեան հաստատման անդրադարձը՝ շրջանի երկիրներուն տնտեսական յարաբերութիւններուն վրայ: Ան կը նշէ, որ 1998-2001 տարիներուն արտաքին առեւտուրի չափը սկսած է տարուէ տարի նուազիլ: Յօդուածագիրը դիտել կու տայ, որ Հայաստան - Թուրքիա սահմաններու բացումի պարագային, Թուրքիոյ պատաքին առեւտուրի 1,5 միլիոն տոլարով, Թուրքիա աւելի մեծ շուկայ պիտի գտնէ Թուրքիոյ արտապետութիւններուն մէջ եւ Հայաստանէն անցնող նախիջեւան - Ազրպէյճան երկաթուղին կարեւոր ճամբայ մը պիտի դառնայ:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ... Ծարուճակուած՝ 4րդ ԷջԸԸ

կայացուցիչներու, յատկապէս ԵՆՈՎԱԿԻ ՎԿԱՆՆԵՐՈՒ, ինչպէս նաեւ միասնականներու իրաւունքները արդեօք կ'ոտնակոխուին», Հայաստանի մէջ կ'անարդեօք քաղաքական բանտարկեալներ: Դէտքեր հարցումներու միջոցով իրենց հետաքրքրութիւնը յայտնեցին նաեւ Հայաստանի դատական համակարգի անկախութեան, վարչական ապականոնման, սեփական շահնորհման գործընթացի թափանցիկութեան եւ այլ հարցերու մասին: Մամուլի ներկայացուցիչները անդրադառնալով կրօնական աղանդներուն, յայտնեցին, որ վերջին տարիներուն անոնց հանդէպ պետութիւնը հալածանքի քաղաքականութիւն չունի: 20 Օգոստոսին եւրոպացի դէտեքները հետ տեսակցեցան Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահ Արտալ Սահրաբեան, որ անոնց բացատրեց Հայաստանի ընտրական օրէնսգիրքին մէջ վերջին շրջանին կատարուած փոփոխութիւնները: Նշեց, որ այս բարեփոխումները կը նպատակադրեն Հայաստանի ընտրական օրէնսգրքը համապատասխանեցնել եւրոպական չափանիշներուն՝ ըստ Եւրոպական Խորհուրդին տրուած Հայաստանի խոստումներուն: Նոյն օրը, դէտեքը հանդիպում ունեցան Հայաստանի արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեանի հետ: Տեսակցութեան ընթացքին, անոնք նախարարին հետ քննարկեցին Հայաստանի բանտային կառավարման համակարգի արդարադատութեան նախարարութեան ենթակայութեան անցնելու հարցը եւ անոր առնչուող մանրամասնութիւններ: Դաւիթ Յարութիւնեանի հետ դէտեքը քննարկեցին նաեւ դատաւարներու ուսումնական կեդրոնի գործունէութիւնը եւ դատական համակարգին մէջ նախաձեռնուած կաշտակարարութեան դէմ պայքարին առնչուող հարցեր:

Յօդուածագիրը դիտել կու տայ, որ Հայաստան - Թուրքիա սահմաններու բացումի պարագային, Թուրքիոյ պատաքին առեւտուրի 1,5 միլիոն տոլարով, Թուրքիա աւելի մեծ շուկայ պիտի գտնէ Թուրքիոյ արտապետութիւններուն մէջ եւ Հայաստանէն անցնող նախիջեւան - Ազրպէյճան երկաթուղին կարեւոր ճամբայ մը պիտի դառնայ:

Քաղուածաբար «ՄԱՐՄԱՐ»ԸԸ

ԹՈՒՐԸ - ՀԱՅ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՌԱՆԿԱՐՈՎ՝

ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Մտահոգիչ հեռանկարներով հայ - թրքական գործակցութիւնը կը շարունակուի բոլոր մակարդակներու վրայ: Այս անգամ կարգը վաճառականներուն է:

Օգոստոս 17ին անձնական նախաձեռնութեամբ Հայաստան այցելեցին Իգտիբէն եւ Էրզրումէն 36 թուրք վաճառականներ՝ Հայաստանի առեւտրական շրջանակներու ներկայացուցիչներուն հետ հանդիպումներ ունենալու համար:

Օգոստոս 19ին թուրք վաճառականները ունեցան մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին պահանջեցին, որ Հայաստան - Թուրքիա սահմանը բացուի: «Մեր նպատակն է Հայաստանի հետ տնտեսական եւ առեւտրական կապեր հաստատել: Հետեւաբար անհրաժեշտ է, որ երկու երկիրներուն միջեւ սահմանները բացուին», ըսաւ Իգտիբէն առեւտուրի գրասենեակի տնօրէն Թայար Օրալ: Ան դիտել կու տայ, որ Թուրքիոյ պետութիւնը քաղաքական պատճառներով եւ մասնաւորաբար Լեւոնային Ղարաբաղի տագնապին պատճառով կը մերժէ բանալ Հայաստանի հետ իր սահմանը:

Օրալ յայտնեց, որ արեւելեան Թուրքիոյ բնակիչները կրնան մեծապէս օգտուիլ, եթէ Հայաստան - Թուրքիա սահմանները բացուին, որովհետեւ աշխարհագրական դիրքով անոնք հեռու են Թուրքիոյ մեծ քաղաքներէն: «Գիտեմք, օրինակի համար, որ Հայաստանի մէջ բժշկութեան բարձր մակարդակ կայ եւ մեր հիւանդները կրնան Երեւան երթալ բժշկուելու», ըսաւ ան: Օրալ նաեւ աւելցուց, որ թրքական պատերազմներէն Հայաստան այցելութեան նպատակով երկու երկիրներուն միջեւ առեւտրական կապեր հաստատելն է:

Նշեց, որ մօտաւորապէս միս մը առաջ հայ վաճառականներէ բաղկացած պատուիրակութիւն մը այցելած էր Իգտիբէն Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ առեւտրական գործակցութեան կարելիութիւնները ուսումնասիրելու համար:

ԱՍՍԷՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԴԷՄ ԹՐՔԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐԸ՝ ԱՊԱՐԴԻՒՆ

Հոյանտական թերթ մը վերջերս տեղեկացուց, թէ Հոյանտայի խորհուրդը մերժած է Հայկական Յեղասպանութեան զոհերու յուշարձանը վերցնելու Ասսէնի թրքական Համագումարին առաջարկը:

Յուշարձանը 2001ի Ապրիլին գետնուղուած էր Տը Պոքամը գերեզմանատան մէջ, ուր հոյանտայ գաղութը ամէն տարի կը հաւաքուի նշելու 1915ի Յեղասպանութեան զոհերուն յիշատակը: Թուրքերը բողոքած են, թէ յուշարձանը պէտք է վերցուի, որովհետեւ ան լարուածութիւն կը յառաջացնէ երկրի հայ եւ թուրք համայնքներուն միջեւ:

«ՄԻՍԹԸՄ ԱՅ Է ՏԱՌԻՆ» Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ԴԱՏԻՆ



Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբը վերջին շրջանին կը գործակցի ռոք երաժշտութեան «Միսթըմ աֆ Է տաուլ» հանրածանօթ խումբին հետ՝ ծերակուտական Իտալըթ թորիչիլիի պատրաստած ցեղասպանութեան բանաձեւին զօրակցութիւն ապահովելու համար: Բանաձեւը պատրաստուած է Միացեալ Նահանգներու Յեղասպանութեան Համագումարին միացման 15ամեակին առիթով: Ան Համագումարին Մ. Նահանգներու միացումը կը նկատէ «սկզբունքային կեցածք ցեղասպանութիւններու դէմ եւ կարեւոր քայլ՝ երաշխաւորելու համար, որ Հայկական Յեղասպանութեան նշեալ բանաձեւին մասին տեղեկութիւններ փոխանցուած են ներկայներուն: Այս աշխատանքին իր մասնակցութիւնը բերած է նաեւ Հայ երիտասարդաց Դաշնակցութիւնը:

«Նիւ Երթ» թայմը այս աշխատանքին անդրադառնալով գրած է, թէ «նուազախումբը, որ կազմուած է ամերիկահայերէ, լարած է «Արդարութեան առանցք» անունը» անունով վրասնեք, որոնք միջոցով Հայկական Յեղասպանութեան եւ նշեալ բանաձեւին մասին տեղեկութիւններ փոխանցուած են ներկայներուն: Այս աշխատանքին իր մասնակցութիւնը բերած է նաեւ Հայ երիտասարդաց Դաշնակցութիւնը: «Նիւ Երթ» այս աշխատանքին անդրադառնալով գրած է, թէ «նուազախումբը, որ կազմուած է ամերիկահայերէ, լարած է «Արդարութեան առանցք» անունով վրասնեք, որոնք միջոցով Հայկական Յեղասպանութեան եւ նշեալ բանաձեւին մասին տեղեկութիւններ փոխանցուած են ներկայներուն: Այս աշխատանքին իր մասնակցութիւնը բերած է նաեւ Հայ երիտասարդաց Դաշնակցութիւնը: Այս նախաձեռնութեան անդրադարձած է նաեւ անգլիական «Տէյիլի Թիւլկրաֆ» օրաթերթը:

7րդ Արուեստ



ՎԵԹԵՐԱՆ ԲԵՄԱԴՐԻՉ ԻՆԿՄԱՐ ՊԵՐԿՄԱՆ ԴՈՒՐՍ ԿՈՒ ԳԱՅ ԻՐ ԿԱՄԱՐՈՐ ԱՔՍՈՐԷՆ՝ ԲԵՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԺԱՊԱԿԷՆ ՄԸ

Քսան տարի առաջ «Փանի Էնտ Ալբրաստորիա» ինքնակենսագրական կարճ ժապավենով շարժապատկերի աշխարհին հրաժեշտ տուած տաղանդաւոր բեմադրիչ ինկմար Պերկման անակնկալի մատնած է իր երկրպագուները, երբ յայտարարած է, թէ պատրաստ է վերստին նուիրուելու իր արուեստին: Հակառակ շարժապատկերի աշխարհին իր ամբողջական հեռացումին, անցնող տասնամեակներուն Պերկման միշտ մնացած է լուսարձակներու տակ՝ իրականացնելով թատերական բեմադրութիւններ եւ բեմադրելով միջազգային տարողութեամբ փառատուններ: Ան իր ներդրումը ունեցած է նաեւ փոքր պատասառի աշխարհին մէջ՝ բեմադրելով պատկերասփիւռի յատուկ ժապավեններ, որոնցմէ ոմանք ցուցադրուած են եօթներորդ արուեստի նուիրուած փառատուններու ընթացքին: Բազմատաղանդայա արուեստագէտը միաժամանակ շարունակած է գրական իր ստեղծագործութիւնները, ժապավեններու բեմադրութիւններու կողքին գրելով նաեւ թատերական եւ շարժապատկերի աշխարհին իր կեանքի փորձառութիւններուն նուիրուած գիրք մը: 1995ին ան պարգևատրուեցաւ

Քաննի փառատունի դատական կազմին մեծ մրցանակով, սակայն... նոյնիսկ չենք կայացաւ ստանալու համար մրցանակը: Շարժապատկերի աշխարհին իր հեռացումի տարիներուն ինկմար Պերկման միշտ ալ առիթ տուած է իր վերադարձին ակնարկող տարածալստութիւններուն, որոնք ի վերջոյ իրականացան այս տարի, երբ ան կատարեալ գաղտնամիտ, անցնող տասնամեակներուն Պերկման միշտ մնացած է լուսարձակներու տակ՝ իրականացնելով թատերական բեմադրութիւններ եւ բեմադրելով միջազգային տարողութեամբ փառատուններ: Ան իր ներդրումը ունեցած է նաեւ փոքր պատասառի աշխարհին մէջ՝ բեմադրելով պատկերասփիւռի յատուկ ժապավեններ, որոնցմէ ոմանք ցուցադրուած են եօթներորդ արուեստի նուիրուած փառատուններու ընթացքին: Բազմատաղանդայա արուեստագէտը միաժամանակ շարունակած է գրական իր ստեղծագործութիւնները, ժապավեններու բեմադրութիւններու կողքին գրելով նաեւ թատերական եւ շարժապատկերի աշխարհին իր կեանքի փորձառութիւններուն նուիրուած գիրք մը: 1995ին ան պարգևատրուեցաւ


սքիւտիոններէն մինչեւ ազատ արուեստի գաղափարը, անոր ժապավենները մնացած են առաջնակարգ գիրքերու վրայ: Ներկայիս ութսունչորս տարեկան Պերկմանի համար թատրոնը միշտ ալ եղած է նախասիրուած թիւն մը: «Կրնամ ապրիլ առանց ժապավեն մը պատրաստելու, սակայն չեմ կրնար ապրիլ առանց թատրոնի: Ձեռ չի հետաքրքրեր, թէ բեմէն ըսելիք պիտի ունենամ կամ ոչ: Բեմին վրայ կը դողամ ամբողջ մարմնով: Միւս կողմէ, ժապավեն չեմ կրնար պատրաստել եթէ ըսելիք չունենամ», ըսած է ան այս մասին: Թատրոնը այնքան կարեւոր դրոշմ ունեցած է անոր շարժապատկերի արուեստին վրայ, որ իր ժապավեններուն պատրաստութեանը սկսելէ եւ նիւթը որոշելէ առաջ ան կ'ընտրէր գաղտնաբար մարմնաւորող դերասանները եւ անոնցմէ ներշնչուելով կ'երեւակայէր իր ժապավենին հերոսները: Այս մասին ան արտայայտուած է հետեւեալ ձևով: «Չեմ

կրնար ժապավենի մը բնագիրը գրել առանց նախապէս որոշելու, թէ որո՞նք պիտի ըլլան անոնց հիմնական կերպարները մարմնաւորող դերասանները: Ասկէ ետք է, որ կերպարը կը սկսի մարմին, հոգի եւ անհատականութիւն ստանալ: Մարմինը, ղէմը եւ անոնց արտայայտչականութիւնը մեծ նշանակութիւն ստացած են Պերկմանի արուեստին մէջ: Անոնցմով է, որ կ'արտայայտուի ցանկութիւնը, ցաւը, տառապանքը, հոգեկան ապրումներն ու վերիվայրումները եւ նաեւ՝ կեանքի ու մահուան միջեւ գտնուող առաձգական եւ անտեսանելի կապը: Իր երազներն ու տեսլականները իր արուեստին միջոցով լաւագոյնս արտայայտելու կողքին, Պերկման ձգտած է գաղտնաբար իրականացնելու: «Կ'ուզեմ այս երազները ներկայացնել իրեն իրականութեան շարունակութեանը, այնպէս ինչպէս գլխաւոր հերոսին կեանքին մէջ կարեւոր հանգրուանին իրական ղէպերը զիրար կը յաջորդեն», ըսած է ան:



Ինկմար Պերկմանը իր արուեստին միջոցով լաւագոյնս արտայայտելու կողքին, Պերկման ձգտած է գաղտնաբար իրականացնելու: «Կ'ուզեմ այս երազները ներկայացնել իրեն իրականութեան շարունակութեանը, այնպէս ինչպէս գլխաւոր հերոսին կեանքին մէջ կարեւոր հանգրուանին իրական ղէպերը զիրար կը յաջորդեն», ըսած է ան:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԸԱՐԺԱՊԱՏԿԵՐԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՓԱՌԱՏՕՆ ՄԸ՝ «ՆԷ Ա ՊԵՅՐՈՒԹ»



«ՆԷ Ա ՊԵՅՐՈՒԹ»-ի որմագը

Չորս օրերու վրայ երկարող իւրայատուկ նախաձեռնութիւն մըն է իրանանեան շարժապատկերի հին եւ նոր գործերէն ընտրանի մը ցուցադրող «ՆԷ Ա ՊԵՅՐՈՒԹ» շարժապատկերի փառատունը, որ կազմակերպուած է խումբ մը երիտասարդներու կողմէ: 22-25 Օգոստոս տեղի ունենալիք այս փառատունին ցուցադրութիւններուն առաջին հանգրուանը տեղի ունեցաւ Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ: Անոր յաջորդ հանգրուանները պիտի շարունակուին «Էսփաս Էս. Տէ.Յի եւ Ընկերային Բարգաւաճման Պէյրութի Ընկերակցութեան կեդրոնին մէջ: Փառատունին ընթացքին ցուցադրուող ժապավենները կարելի է բաժնել երկու տեսակի: փորձառական ժապավեններ եւ աւելի աւանդական բնոյթ ունեցող ժապավեններ: Անոնց մէջ կան մինչեւ իսկ 1970ական թուականներէն պատրաստուած ժապավեններ: Այսօր կը ցուցադրուի 1975ին ժոսիկ Սապպի կողմէ պատրաստուած «ԼԷ Լիպան տակ լին թուրմանք» վաւերագրական ժապավենը, որ... տակաւին չէ ցուցադրուած Լիբանանի մէջ: Անոր կ'ընկերանայ նոյն թուականին պատրաստուած «Պէյրութ օ Պէյրութ» (բեմադրիչ՝ Մարուն Պաղաստ): 23 Օգոստոսին պիտի ցուցադրուի «ԼԷ Բուս ու քր թի սուս» ժապավենը (բեմադրիչ՝ Ալուուի, 1982ի արտադրութիւն), իսկ 24 Օգոստոսին պիտի ներկայացուի Քաթիա Ժարժուրայի «Անթր տօ ֆրոն» վաւերագրական ժապավենը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԱ

Լիբանանեան սրահներուն մէջ այս շաբաթ «Ուիլիսոնթըրը»-ի կողքին կը ցուցադրուին երեք նոր ժապավեններ, որոնք «Կը բուրեւ» շարժապատկերի սրահներու ամառնային անփութութիւնը: Արդարեւ, այս շաբթուան համար իբրեւ նորութիւն ներկայացող «Պիկ ֆէթ լալլը» եւ «Զելփ, այմ Է ֆիշ» ժապավենները կը նպատակադրեն հրապուրել ամրան արձակուրդէն ձանձրացած պատանիները եւ անոնց տալ խնդրէի եւ զուարճութեան պահեր: Իսկ ձէքի Չէնի «Տը Էքսիտեթըլ սիպլը» կը միտի անոնց տալ արեւելեան մարտարուեստի ցուցադրութիւններով յագեցած արկածախնդրական պահեր: Իր նոր ժապավենին մէջ ձէքի Չէն մեծ պատասառ կը վերադառնայ իբրեւ մարզական պիտոլըններու արկածախնդիր վաճառող մը: Ան համոզուած է, որ ինք քորէացի մեծահարուստ վաճառականի մը գաւակն է եւ կը մեկնի Արեւելք՝ արկածախնդրական պահերու փնտռուողով: Սակայն ան ինքզինք միւրճուած կը գտնէ բժշկական գաղտնի ծրագիրներու մէջ: Թեոսի Չէնի բեմադրած այս ժապավենին մէջ դեր ստանձնած են նաեւ Վիլիան Հսու, Գիմ Մին եւ Ալֆրէտ Չիուսկի:

Մանուկներու եւ պատանիներու հասցէագրուած կատակերգութիւն մըն է «Պիկ ֆէթ լալլը»-ը, որ մեծ պատասառ կը հանէ «փոքր» մարդ մը, կամ աւելի ճիշդ ըլլալու համար՝ չափահասի հովեր առողջ տանչորս տարեկան պատանի մը: Դպրատան տարեշրջանին ձէյսըն Եփրատի (Յըյիքի Միւնիք) «Պիկ ֆէթ լալլը» խորագրով շաբաթուրթիւնը կը գողցուի ժապավեններու անգործ արտադրիչի մը կողմէ, որ կը նպատակադրէ զայն վերածել մեծ եւ յաջող ժապավենի մը: Ձէյսըն իր ընկերներուն եւ մասնաւորաբար Քէյլիի (Ամանտա Պայնը) օգնութեամբ կ'ուղղուի Հոլիվուտ՝ վերատիրանալու համար իր ստեղծագործութեան: Իր հերոսներուն հետաքրքրական շարունակներով եւ ծիծաղաշարժ տեսարաններով հարուստ այս ժապավենը վստահաբար գոհ պիտի ձգէ իր պատանի հանդիսատեսները:

Ցուցադրուող այլ նորութիւն մըն է «Զելփ, այմ Է ֆիշ» դանիական կենդանի գծանկարը (2000ի արտադրութիւն), ուր երեք երեխաներ սխալմամբ հեղուկ մը կը խմեն եւ կը վերածուին... ձուկի: Ժապավենին մէջ ի յայտ կու գայ, որ ձուկերու աշխարհին մէջ եւս կան տիրելու եւ զօրաւոր ըլլալու ձգտումներ: Նախորդ շաբաթներէն ցուցադրուող ժապավեններու ցանկը եւս հարուստ է մանուկներու եւ պատանիներու յատուկ ցուցադրութեամբ: անոնցմէ յիշենք՝ «Սքուպի Տուս», «Ճիմի Նիլթրըն» եւ «Ռիթըն Բու Նելլըլէնտ»:

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

- «ՏԸ ԷՍԻՏԵՆԹԸԸ ՍՓԱՅ» (Փլանք / Ապրաժ, Զոնորոտ, Ֆրիուէյ, Զուր, Թրիփուի)
- «ՈՒԻՆՏԹՈՐԸՐԸ» (Էսփաս, Ամփիր / Տիւն, Սոֆիլ, Սեմ Էլի, Սոտեթ, Մըալլէտ 2001, Լաս Սալիմաս, Կալաքսի, Սըալիէթ)
- «ՇԵԼՓ, ԱՅՍ Է Ֆիժ» (Էսփաս, Ամփիր / Տիւն, Սեմ Էլի, Սոտեթ, Մըալլէտ 2001, Լաս Սալիմաս, Կալաքսի)
- «ԻՆԱՏ» (Էսփաս, Ամփիր/Սոտեթ, Սեմ Էլի, Տիւն, Կալաքսի, Մըալլէտ 2001, Լաս Սալիմաս, Սըալիէթ)
- «ՍՄԱՏ ՕԼ ՖԻՐԸ» (Փլանք / Ապրաժ, Զուր, Զոնորոտ, Ֆրիուէյ, Թրիփուի-Ամփիր / Սոֆիլ)
- «ՈՇՁԻՏԸՆԸ ԻՎԸԼ» (Փլանք / Ապրաժ, Զոնորոտ, Ֆրիուէյ)
- «ՍՄՏՅՅԹՈՒԼ» (Էսփաս, Ամփիր / Տիւն, Սոֆիլ, Սոտեթ, Սեմ Էլի, Մըալլէտ 2001, Լաս Սալիմաս, Սըալիէթ)
- «ՈՒԻՆՏԹՈՐԸՐԸ» (Փլանք / Ապրաժ, Զոնորոտ, Ֆրիուէյ)
- «ՄԵԼՅՏ - 2» (Փլանք / Ապրաժ, Զոնորոտ, Ամպաստ, Ֆրիուէյ, Փլաքա)
- «ՄԵԼ ԻՆ ՊԼԵ - 2» (Էսփաս, Ամփիր/Սոտեթ, Տիւն, Կալաքսի, Մըալլէտ 2001, Լաս Սալիմաս, Կալաքսի)
- «ՊԵՆՏԻՅՅ» (Փլանք/Ապրաժ, Զուր, Զոնորոտ)
- «ԸՐՈՍՐՈՏԸ» (Ամփիր, Սոտեթ Մըալլէտ 2001, Կալաքսի)
- «ՄԱՅ ԵՐԱՅԱՅ» (Էսփաս, Ամփիր/Սոտեթ, Մըալլէտ 2001)
- «ՍՓԱՅՏԸՐ - ՄԵԼ» (Ամփիր/Տիւն, Կալաքսի)
- «ՃԻՄԻ ՆԻԹՐԸՆ. ՊՕՅ ՃԻՆԸՍ» (Փլանք / Զուր, Ապրաժ, Զոնորոտ)
- «ԼՈՒԿ ԹԱՅՍ ՏԵՏ» (Փլանք/Ապրաժ, Զուր, Զոնորոտ)
- «ԿԻՏՈՒ» (Ամփիր/Սոտեթ)
- «ԼԵՃՆՆՍ ԱՏ ՏԸ ՈՒՏ ՏՐԵԿՎՈՒ» (Էսփաս, Մըալլէտ 2001, Կալաքսի)

●●●● Գերազանց ●●●● Շատ լաւ ●●● Լաւ ●● Միջակ ● Զեր յանձնարարող □ Զեր ոյտած

ԸԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԱՋԱՅՆ ԹԻՒՆԵՐԸ

Էսփաս - 09/212516 - Սոտեթ - 01/616707 - Տիւն - 01/792123 - Սոֆիլ - 01/328806 - Զոնորոտ - 01/739439 - Ամպաստ - 09/226010 - Ֆրիուէյ - 01/485590 - Ապրաժ - 01/292192 - Քալաքսի - 09/912503 - Զուր - 09/221363 - Սըալիէթ - 08/813901 - Սեմ Էլի - 04/443992

Շաբթուան Ժապավեն

«ՈՒԻՆՏԹՈՐԸՐԸ» ԿԸ ԽԵՂԴՈՒԻ ԻՐ ԻՍԿ ՀԱՆԳՈՅՑՆԵՐՈՒՆ ՄԵՁ




Երկրորդ Աշխարհամարտի ամերիկեան պատմութեան դրուագ մը մեծ պատասառ բարձրացնող ժապավեն մը եւս այս շաբաթվաբեջին կը գրաւէ լիբանանեան սրահները: «Ուինտթորըրը» ներշնչուած է պատերազմի ընթացքին ամերիկեան բանակին կողմէ նաւագո ցեղին պատկանող ամերիկացի բնիկ հնդկներու լեզուի գրեւորակաւ նախապատկերով իբրեւ գաղտնի լեզու օգտագործման գաղափարէն եւ այդ իսկ նպատակով հարիւրաւոր նաւագո հնդկներու ամերիկեան ծովուծին մէջ ներառման երեւոյթէն: Եւ եթէ աւելցնելու ըլլանք այն, որ ամերիկացի երկու հինդուներու յանձնարարուած է ամէն գնով գաղտնի լեզուն պահպանելու պարտականութիւնը, կրնանք ակնկալել, որ առիթ պիտի ունենանք դիտելու հինդուներու յարաբերութիւններ, բարոյական արժեքներու բախումներ եւ մանաւանդ՝ փոքրամասնութիւններու նկատմամբ խտրականութեան հարցեր արծարծող ժապավեն մը: Սակայն մեր ակնկալութիւններուն մեծ մասը ջրող ժապավեն մըն է «Ուինտթորըրը»:

1944ի Յունիսի միջապահական Սալիպան կղզին գրաւելու համար համարյա ելած ամերիկեան ծովուծի երկու անդամներուն՝ ձօն Էնտրըրը (Նիքոլաս Քէյն) եւ Օքս Էնտրըրը (Քրիսթիան Սլէյթըր) կը յանձնարարուի պաշտպանելու նաւագո երկու հնդկներ, որոնց մօտ կը գտնուի գաղտնի լեզուին բանալին: Անոնք նոյնիսկ երկու նաւագոները սպաննելու գնով պիտեք է պահպանել գաղտնի լեզուն: Այս պատճառով է, որ ժապավենին առաջին կիսուն ձօն Էնտրըրը պատերազմի նախորդ կողմերէն դառն յիշատակներով ծանրաբեռնուած վայրագ զինուոր մը, կարելի եղածով կ'ափ հեռու կը մնայ իր պաշտպանեալէն՝ Պէն Եսփիլէն: Միւս կողմէ, Օքս աւելի մարդկային վերաբերում կ'ունենայ իր պաշտպանեալին՝ Չարլի Ուայթհորսի նկատմամբ: Հնդկական սրիգոլ եւ հարմոնիքայով անցնող նաւագո կարգիւնը որոշ չափով ընկերական մթնոլորտ եւ յուզական տրամադրութիւններ կը հաղորդեն ժապավենին, որուն գագաթնակէտը կը հանդիսանայ այն պահը, երբ ձօն Էնտրըրը իր օրոք իրեն տրուած հրահանգին, կը ստիպուի անցնելու նաւագո կարգիւնը: Զուր, որուն պատճառով կը փոխուի իր եւ Եսփիլի յարաբերութիւնները: Այս վերջինը անմիջապէս կը վերածուի Ռամպոյի ռոնով հերոսի մը, որուն առաքելութիւնը դարձաւ կը միացնէ երկու հերոսները: Դժբախտաբար «Ուինտթորըրը», փոխանակ կեդրոնացաւու գաղտնի լեզունով փոխանցող տեղեկութիւններուն եւ անոնց հետեւող պատերազմական իրադարձութիւններուն, իր ուշադրութիւնը առաւելաբար կը կեդրոնացնէ ձոյի հոգեկան աշխարհի փոքրիկներուն վրայ: Ժապավենին առաջին կեսին իսկ յայտնի կը դառնայ, որ շատ բան խոստացող այս գործը չի յաջողիր ամբողջացնել նոյնիսկ իր խոստումներուն մէկ մասը:

Պատերազմական ժապավեններուն մէջ ընդհանրացած հետաքրքրական երեւոյթներէն են ընդհանրապէս զինուորներուն միջեւ զարգացող ընկերական, եղբայրական եւ կամ թշնամական զգացումներն ու կապերը, որոնք սակայն «Ուինտթորըրը»-ի մէջ գրեթէ անտեսանելի են (հագուադէպ բացառութիւն է Օքսի եւ Ուայթհորսի միջեւ զարգացող կապը, որ յաճախ կը մնայ լուսանցքային): ձոյի դերով հանդէս եկող Նիքոլաս Քէյն կ'ունենայ միջակ խաղարկութիւն եւ բաւարար չափով չի խորանար իր կերպարին հոգեբանական վերիվայրումներուն արտայայտութիւններուն մէջ: Հանդիսանալու համար հետաքրքրական պիտի ըլլար աւելի մտերմանալ Եսփիլի կերպարին, որուն ցեղային առանձնայատկութիւնները յայտնի կը իր ստանալու շատ հարուստ նիւթ յայտնաբերելու համար: Լաւ տուեալներով, սակայն չհասունցած ժապավեն մըն է բեմադրիչ ձօն Ուուի «Ուինտթորըրը»-ը, որ միայն մակերեսային օրէն կ'օգտագործէ նաւագոյի գաղտնի լեզուին պատմութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի պատերազմական տեսարաններուն, անոնք թէեւ կրնան հրապուրել այս տեսակի ժապավեններու սիրահարները, սակայն շատ հեռու կը մնան գլուխ գործոց մը ըլլալէ:

Պատրաստող՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ



ԳԱՂՏՆԻ ՆԿՈՒՂՆԵՐ ԵՒ ԱՐԳԻԼՈՒԱԾ ՊՏՈՒՂՆԵՐ

ԹԵՒ ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐԸ ԱՐԳԻԼՈՒԱԾ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՄԱՆԴՈՒԹԻՒՆ ՍԸ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԻՐԱՆԻ ՄԵՋ: «ՏԻ ԻՆՏԻՓԵՆՏՆԸ» ԿԸ ՆԿԱՐԱԳՐԵ ԱՅՆ ԳԻՆԵ, ՈՐ ՕՍԱՐ ԽԱՅԵԱՄԻՆ ՆԵՐՇՆՉՈՒՄԻ ԱՂԲԻՐՆ ԷՐ

Փերսեփոլիսի հրաշալի աւերակներէն քիչ մը հետո Շիրազը Իրանի աւանդական քաղաքներէն է: Անիկա հուշակոթող է իր պարտէզներով եւ բանաստեղծներով, ինչպէս նաեւ հպարտ է իր մզկիթներով: Թեհրանին քաղաք-տած՝ Շիրազը պահպանողական վայր մըն է, սակայն նաեւ կեդրոնն է գինեգործութեան, որ անբերակալելի կը թուի այսօրուան Իրանի մէջ:

Ընդհանրապէս Իրանի մասին չենք մտածեր իրեւել գինիի սիրահարներու դրախտը: Սակայն հոն գոյութիւն ունի թէ՛ եւ թաքուցուած, բայց կենսունակ գինեգործութեան մշակոյթ մը: Մասնաւորաբար Շիրազի այգիներէն պատ-րաստուած գինին բաւական լաւ է: Այգեգործ-ները ընդհանրապէս հակամէտ են լուռ մնա-լու այս մասին, որովհետեւ ոգելից ըմպելիները Իրանի մէջ խափել արգելուած են 23 տարիէ ի վեր: այն օրէն, երբ հիմը դրուեցաւ աշխարհի առաջին իսլամական հանրապետութեան: «Ձերբակալութիւնը կը նշանակէր մտրակի 70 հարուած: Խնճոյքներու առիթով մարդիկ հերթով կը հակէին: Անոնք քննիչներ նկատուելու պարագային անմիջապէս լուացարանին մէջ կը թափէին արգելուած խմիչքը եւ անանուխ կը ծամէին», կ'ըսէ իրանցի մը:

Տնտեսական դժուարութիւնները, ինչպէս նաեւ նախագահ Խոթեմիի բարեկարգումներու «հովը» աւելի թոյլատու պայմաններ ստեղծած են: «Այս օրերուն, եթէ դրամ ունիս, կրնաս ծեծէն խուսափիլ դրամ վճարելով: Իւրաքանչիւր մտրակի հարուածի գինը համազօր է երկու շիշ գինիի արժէքին», - կ'ըսէ երիտա-սարդ մը: - Կրնաս իր յիսկ գումար մը վճարել, որ զօրաւոր չգարնեն»:

Սակայն, հակառակ ներկայ վարչակարգին ընդդիմութեան, գինեգործութիւնը այնքան արմատացած է իրանեան մշակոյթին մէջ, որ կարելի չէ զայն արմատախիլ ընել քանի մը տասնեակ տարի չքաղաքներով գայն: Շիրազը որակաւոր գինիի տեսակներ կ'արտադրէ հա-զարամեակներէ ի վեր: Յարգ աշխարհի մէջ գինեգործութեան ամէնէն հին ապացոյցը Շիրազի մօտակայ վայրէ մը յայտնաբերուած 5500 տարուան գինիի սափորի մը մէջ պահպան-ւած թթու մըն է: Իսկ հին պարսիկներուն պատ-մութիւնը օժտուած է Շիրազի գինիներով:

Փերսեփոլիսէն յայտնաբերուած թագաւո-րական հնադարեան սալիկներու վրայ արձա-նագրութիւններ կը պատմեն Շիրազի մէջ եւրոպացիներու գինիի արտադրութեան մասին, որ այժմ պատմագէտներ կը կարծեն, թէ մարդիկ գինիով կը վճարուէին: Գինի կը մատուցուէր նոյնիսկ թագաւորական ձիերուն եւ երբեմն՝ ուղտերուն, անոնց օգնե-լու համար տաժանակիր ճամբորդութիւններու ժամանակ: Ն.Ք. 5րդ դարուն Հերոտոտոս գրած է, թէ քրեմենեան իշխանաւորներ կա-րելու որոշումներ կը կայացնէին հարթած վի-ճակի մէջ: Արիստոֆանէս գրած է, թէ անոնք ապակիէ բաժակներով գինի կը խմէին, երբ ուրիշներ կաւէ թասեր կը գործածէին:

Իսլամական գրաւումէն ետք, 9րդ դարուն, Շիրազը որակաւոր գինիի հուշակոթող էր Մի-ջին Արեւելքի մէջ: Իսլամութիւնը չէր խափա-նած գինիի արտադրութիւնը: 500 տարի ետք Ֆրանսացի եւ անգլիացի գինիի առեւտրական-ներ կը սեղէին Շիրազի գինին: «Աշխարհի մէջ որեւէ սեղ Շիրազի գինիին լաւ չկայ», գրած է 17րդ դարու անգլիացի ուղեգիր Թամար Հըր-պըրթը:

Իրանի մէջ գինեգործութեան եւ իսլամու-թեան միջեւ կայքը աւելի երկդիմի եղած է, քան՝ ինդոնաւոյց: Գինին ազատ կը հոսէր 16րդ դարու սափաւիտ իշխանաւորներու պա-լատներուն մէջ եւ կարելու դեր ունեցած է իս-լամական խորհրդապաշտ աւանդութեան՝ սուֆականութեան զարգացումին մէջ:

«Սուֆիներուն համար գինիովալը ոգեղէն փորձառութիւն մըն էր, - կ'ըսէ իրանցի երի-տասարդ մը: - Անոնք կ'ուզէին մոռնալ գի-տակցական վիճակը եւ խզուել նիւթեղէն աշ-խարհէն՝ մոռնալու համար սուֆի ըլլալու դժուարութիւնները»:

Միջնադարու բանաստեղծ Հաֆէզը, որ ըսած է՝ «Դու՛ն սիրոյ կրքոտ կարմիր գիճի՛ն բերիլ ինձի...», թաղուած է կեդրոնական Շիրազի մէջ: Օմար Խոյսեան, որ կը մարմնավորէ իս-լամական սրգայելի ոգի մայաքաղը, իր «Ռու-պայեթ»-ին մէջ կը յայտարարէ. «Եթէ արգիլ-ւած գիճիով գիճովցած եմ, թող այդպէս ըլ-լայ»:

«Միշտ գինի խմած ենք եւ միշտ պիտի խմենք, հակառակ զայն արգիլող ապարդիւն փորձերուն», - կ'ըսէ երիտասարդ մը: Պարզա-պէս փոխուած է մեր խմելու ձեւը: Յեղափո-խութենէն առաջ դուրսը կը խմէինք եւ ներսը կ'արօթէինք: Հիմա դուրսը կ'արօթենք եւ ներ-սը կը խմենք»:

Իրան կը գտնուէի շաբաթէ մը ի վեր: Բա-ւական պատմութիւն եւ բանաստեղծութիւն կարողացած էի ուսումնասիրութեան համար, սակայն կաթիլ մը չէի համտեսած Շիրազի հուշակոթող գինիին: Առաջին փնտռութեանը քիչ առաջնորդեցին տեղւոյն եկեղեցին: Իրա-նի քրիստոնեայ փոքրամասնութեան բողոքո-վին արտօնուած է գինի պատրաստել եւ խմել: Սակայն դարպասին մատուցած գինին դառն յուսախաբուութիւն մըն էր:

Վերջը լսեցի, թէ հակապահ թաղամասին մէջ կարելի էր գինի գնել: Սակայն անցեալ

տարուան գինին սպառած էր, իսկ նոր եղա-նակի գինին տակաւին պատրաստ չէր: Խա-ղողները տակաւին կը չորցուէին տանիքնե-րուն վրայ: «Իրանի արեւը եւ խաղողը չորցը-նելու գործընթացը կը պայմանաւորեն գի-նիին քաղցրութիւնը», ըսաւ հրէական թաղա-մասին մէջ գինի պատրաստող մը: Կարելի է նշել նաեւ Ղուրի պակասը եւ խաղողին մէջ խառնացած շաքարը: Անոր պատրաստած գի-նիին համը տակաւին մտքիս մէջ է:

Ներկայ արգելքին բարիքներէն մէկը տնտե-սութեան կողմէ պարտադրուած ճնշումին բացակայութիւնն է: Գինիի պատրաստու-թեան համար մեքենաներ կամ նոր նիւթեր չեն գործածուելու եւ գինեգործներ կը շարունակեն կիրարկել աւանդական միջոցներ: Իսկ ար-դիւնքը հրշայի կրնայ ըլլալ:

Գինիի մասնագէտներ կ'ըսեն, թէ այժմ աւստրալիացիք, քալիֆորնիացիք եւ հարաւա-յին ափրիկեցիք Շիրազի գինի կամ սիրահ կը պատրաստեն ու կը վաճառեն աշխարհի տա-րածքին: Շիրազէն առեւտրական մը գալորո-թով հակազդեց, երբ ըսի, թէ արեւմուտքի մասնագէտներ այժմ կը հաւատան, որ սիրա-նը (ինչպէս այս գինին ծանօթ է եւրոպայի տարածքին) կամ շիրազը (Ամերիկայի մէջ տա-րածուած անուր) ծնունդ առած է Ֆրանսա-յի մէջ, ուր հռոմէական ժամանակներէն ի վեր որակաւոր գինի կ'արտադրուի Ռոն գետի ափերուն: «Դատարկ խօսք է, - ըսաւ ան: - Ֆրանսացի մը մեր խաղողը գողցած է 5 դար առաջ»:

Իրանցիք ընդհանրապէս այսպէս կը կար-ծեն: Ոմանք նաեւ կ'ամբաստանեն խաչակիր-ները, որոնք «տոպրակներով Շիրազի խաղող տարած են իրենց հետ»: Կարգ մը իրանցիներ նաեւ համոզուած են, թէ շերիմ կու գայ ոչ թէ հարաւային Սպանիոյ ժոքէզ քաղաքէն, այլ՝ Շիրազէն: Հաւանաբար տարակարծութիւննե-րը երբեք պիտի չփարատին, սակայն ինչ որ այ ըլլայ ճշմարտութիւնը, կասկած չկայ, թէ Շի-րազի մէջ գինի կ'արտադրուէր շատ աւելի կա-նուխ, քան՝ սիրահը:

Այդ գիշեր ներկայ եղայ նորահասի մը ի պատիւ սարքուած խնճոյքի մը: Հիւրընկալը, որ իւրերը բաց չըլլազգեստ մը հագած էր, իր

ամուսինին հետ կարկեհանի գոյնով պաղած գինին կը լեցնէր բաժակներու մէջ: Երկուքն ալ իսլամ էին, նոյնպէս՝ հարսն ու փեսան եւ բոլոր հիւրերը:

Այս անգամ կարմիր գինին չոր էր եւ հա-րուստ: անմիջապէս խուժեց զլուխս, մինչեւ որ ընթրիքը զիս փրկեց խայտառակութենէ: «Մի մտահոգուիր, - կարեկցանքով յարեց տանտի-րուհին: - Եղբայրներս սովորաբար կը խմեն մինչեւ գինուրան: Սակայն այս գիշեր կ'գոր-ծեն ինչպիսիք անուր նորապսակները»:

Կը մնար հուշակաւոր խաղողները տեսնել թեթեւեղութեան վրայ: Սակայն ուղեւորու-թեան վերջին օրը տակաւին չէի տեսած որե-ւէ խաղող:

Մեկնումէս քանի մը ժամ առաջ ինքզինքս գտայ Շիրազի ծայրամասին, պատի մը ետին տարածուող հին պարտէզի մը առջեւ: Փայտէ պարպար կղզուած էր, սակայն միջին տարի-քի մշակ մը զիս ներս ընդունեց եւ քիչ մը կաս-կածելէ ետք ընդունեց ցոյց տալ այգին: Եւ հոն, դեղձի, սալորի եւ նուազ ծառերու ետին թաք-նուած էր տարաշխարհիկ այգի մը՝ տարբեր ձեւի եւ չափի խաղողներով:

Մշակը՝ էմիր, հոն կ'աշխատէր 7 տարեկա-նէն ի վեր: Անոր հայրն ու մեծ հայրը հոն աշ-խատած էին իրմէ առաջ: Ան կը յիշէ, թէ 1970ական տարիներու սկիզբը, մինչ շահ տա-կաւին կը դեկավարէր երկիրը, Ֆրանսական պատուիրակութիւն մը եկած էր եւ «մեծ գու-մար վճարած էր» կարգ մը սածիլներ տանելու համար: Յեղափոխութենէն ետք այգին գրաւ-ւած էր հարուստ հողատէրէն, որ էմիրին հա-մաձայն, անմիջապէս խոյս տուած է դէպի Գալիֆորնիա՝ կարգ մը սածիլներ տանելով իրեն հետ: Յայտնապէս այս իրադարձութիւն-ները տակաւին յատուկ նշանակութիւն ու-նէին էմիրին համար, ինչպէս նաեւ՝ այն հին վարկածը, թէ Շիրազի գինիները շատ աւելի հին ու հուշակաւոր էին, քան՝ Ֆրանսական ար-տադրութիւնները: «Անոնք, որոնք կ'ըսեն, թէ շիրազը կու գայ Ֆրանսայէն կամ այլ տեղէ, իսկ այս կ'ըսուին, - յայտարարեց ան վաճակա-նօրէն: - Շիրազը միշտ եղած է գինիի քաղաքը: Պարզապէս պէտք է կարդալ մեր պատմու-թիւնը՝ դիտանալու համար ճշմարտութիւնը»:

Ինչ որ այ ըլլար ճշմարտութիւնը, ուրախ էի, որ Շիրազին կը մօտենայի կասկածով, մա-նաւանդ՝ երբ ի վերջոյ բախտը ունեցած էի իյ-նալու անոր դրախտային մէկ անկիւնին մէջ, հարաւային Իրանի խորքը: Մինչեւ գիշեր ար-դէն սորված էի այս փոքր այգիին մէջ աճող 9 տարբեր տեսակի խաղողներուն անուններն ու առանձնայատկութիւնները: Նաեւ համտեսած էի խոշոր ու ձուաձեւ քաղցր ու կանաչ լոր-քուշը, որ այս անունը կը կրէր, որովհետեւ Հորս գաւառին տղամարդիկը տապալելու յատ-կութիւնը ունէր: Անիկա կը գործածուէր պատրաստելու համար հուշակաւոր «քաղցր գինիին աւելի լաւ» խմիչքը: Համտեսած էի նա-եւ սեւ շահալին, որ ժողովրդային մակարդա-կի վրայ ծանօթ էր իրբեւ «թագաւորական խաղողը»:

Լաւագոյնը այն էր, որ յայտնաբերած էի Եւրոպայի եւ Ամերիկայի գանգուածային ար-տադրութենէն շատ հետու այգեգործութեան աւանդութիւն մը, եւ որ առիթ կու տար ճա-շակելու այնպիսի համար, որոնք գրեթէ չեն փոխուած դարերու ընթացքին:

Իրիտանացի գեղագէտ եւ հարեցող Ռո-պըրթ Պայրըն 1930ական տարիներուն անցած է Շիրազէն: Իր «Տը ռոտ բու Օքսիալա» ու-ղեգրութեան մէջ ան կ'եզրակացնէ հետեւեա-լը. «Եթէ այգիները անուն ունենային եւ գինի պատրաստողները՝ իցան, տարբեր գինիները իրարմէ զատորոշելու եւ մթերելու համար, ապա Շիրազը կրնար մեծ վաճառանիշներով գինիներ արտադրել»: Սակայն ան նաեւ այն մտազխուութիւնը ունէր, թէ օտարներ պիտի փորձէին փոփոխութիւններ ներմուծել՝ եւրո-պական իրենց սեփական արտադրութիւննե-րուն հետեւողութեամբ: «Կը նախընտրէ յոռե-գոյն գինին, որ ունի իր իւրայատուկ համար, գրած է ան»:

Կը խմեմ այդ տողին կենացը, ինչպէս պիտի խմէին բազմաթիւ իրանցիներ, սակայն գաղտ-նի: Հագարաւոր տարիներ ետք Շիրազի պատ-մական գինին անապակ կը մնայ եւ ոմանք կարծիքով՝ անգերագանցելի:

(ՅԱՊԱՒՈՒԱԾ)

ԻՐԱՆԻ ՆՆԱԴԱՐԵԱՆ ՔԱՂԱՔԸ ՎՏԱՆԳՈՒԱԾ

«ՏԻ ԷՍՏԻՓԵՆՏՆԸ» ԿԸ ՆԿԱՐԱԳՐԵ ՓԵՐՍԵՓՈԼԻՍԻ ՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՅՐԻՆ ՎԻՃԱԿ ԵՒ ՁԱՅՆ ՓՐԿԵԼՈՒ ԴՈՒՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հնագէտը թշնամիին նայեցաւ քարէ դար-պասներէն, որոնք աւելի քան 2500 տարի դի-մադրած են կլիմայական փոփոխութիւննե-րուն եւ պատերազմներուն:

«Կը տեսնե՞ս գործարանները, ապականու-թիւնը, - ըսաւ Հասան Ռահմազ, որ կը զլխա-ւորէ հնադարեան Պարսկաստանի ամէնէն աւելի ծանօթ վայրը պահպանելու աշխատան-քը: - Յարդ ասիկա Փերսեփոլիսի դիմադրաւած ամէնէն մեծ վտանգն է»:

Ճարտարարուեստը եւ քաղաքային կենսըը ասպատակող ինանկի նման կ'արշաւեն դէպի Փերսեփոլիսի շնորհազարդ սիւները եւ իրա-րու վրայ բացուող շրջափակերը: Յոյները դա-րաքը կը կոչէին Փերսեփոլիս, այսինքն՝ պար-սիկներու քաղաք: Հովը քանի մը մոլոր հետուէն կը բերէ չարիքը. ինքնաշարժի ծուխ, քիմիա-կան գործարաններէ բարձրացող գոլորշի եւ թթուն անձրեւներ տեղացնող ամպեր:

Մասնագէտներ կ'ըսեն, թէ Շիրազէն բարձ-րացող թանձր ծուխը եւ անոր արտաբաններ-րուն մէջ տարածուող աղմկալից գործարան-ներն ու գիւղաքաղաքները աւազաթուղթի պէս կը մաքցնեն Փերսեփոլիսի ծակտակէն քարերը: Անոնք մտազխուութիւն կը յայտնեն, թէ գարդաքանդակներն ու քարէ կոթողները կրնան անհետանալ քանի մը տասնամեակի ըն-թացքին, եթէ աճը շարունակուի առանց հա-կակալիչի:

«Ժամանակին Փերսեփոլիսը հնադարեան քաղաքակրթութեան կեդրոն մըն էր: Այժմ շրջափակուած ենք արդի քաղաքակրթու-թեամբ», կ'ըսէ Ռահմազ, որուն հայրը 50 տա-րի առաջ մասնակցած է շրջանին մէջ կատար-ւած առաջին պեղումներուն:

Քարաքանդակներու ստորոտին տարած-ւող Փերսեփոլիսը Աքեմենեան հարստու-թեան օրով ծխախտութիւններու եւ պաշ-տաններէ երկիւղածութիւն առթող կեդրոն մըն էր: Դարեր ետք անոր ճակատագիրը հնա-գիտութեան անդին է եւ քաղաքականութեան հարց է: Անիկա կարեւոր է 1979ին իսլամական յեղափոխութենէն ետք Իրանի ինքնութեան նոր բնորոշումէն:

Մայրաքաղաք Իրանուրներու իշխանութեան օրերուն նիւթական նուազագոյն օգնութիւն յատկացուած է Իրանի հնադարեան վայրե-րուն, մասնաւորաբար անոնք, որոնք կը կան-խեն 7րդ դարուն իսլամութեան տարածումը: Փերսեփոլիսը նաեւ տուժած է, որովհետեւ

կ'առնուէր գահընկէց Մուհամէտ Ռիզա Փեհ-լեւի շահին հետ. ան 1971ին աշխարհի դեկավար-ները փարթամ խնճոյքի մը հրաւիրած էր քա-ղաքին աւերակներուն մէջ: Շահին ընդդիմա-դիրները իրադարձութիւնը դատապարտած էին իրեն անոր անձնակառու շուշայտութեանց մէկ ապացոյցը, երբ երկրին մեծ մասը կը պայ-քարէր աղքատութեան դէմ:

«Յեղափոխութենէն ետք նիւթական աղ-բիւններ չկային եւ մասնագէտներ չունէինք, որ պէտք էր իրանցիներ հնագէտներ պատրաս-տէին, - կ'ըսէ Թալեպիան: - Դժուար ժամանակ-ներ էին»:

Այժմ նիւթական յաւելեալ աղբիւրներ կը յատկացուին Փերսեփոլիսի, որ մաս կը կազմէ ՄԱԿի համաշխարհային ժառանգութեան ցան-կին: Սակայն դրամը չի կրնար կասեցնել ար-դի քաղաքակրթութեան ոտնձգութիւնները: Իրանի կրօնական իշխանաւորները 1980ական տարիներուն քաղաքեցիներն ծնունդ-ներու աճը, ինչ որ գրեթէ կրկնապատկեց ընկալութեան թիւը: Շիրազի նման քաղաքներ յորդեցան: Մինչ այդ պետութեան հակաշի-ռիւն տակ գտնուող ճարտարարուեստներն ծնունդ առին երկրին տարածքին՝ զայն տնտե-սապէս ինքնաբաւ դարձնելու համար:

Կ'ենթադրուի, որ Փերսեփոլիսը սկսած է կառուցուիլ Ն.Ք. 518ին՝ իրբեւ դրախտի երկ-րային պատկերացումը: Հսկայական գոյգ սանդղակներ կը բարձրանային դէպի ընդար-ձակ բացատներ, որոնց վերեւ փայտէ երեք գոյնով սիւներու վրայ ծածկոյթներ շուք կը սփռէին: Քաղաքը նաեւ ցուցադրաւային էր Պարսկաստանի ազդեցութեան լայնատարած գօտիին:

Երկարաւուն բարձրաքանդակ մը կը պատ-կերէ հեռաւոր վայրերէ եկած պատուիրակ-ներ, որոնք ընծաներ կը մտուցեն: ափրիկե-ցիք ընծուող մը կը բերեն, հայեր՝ գինիի շի-չեր, կեդրոնական ափաղք՝ հիւսուածեղէն: Մասնագէտներու համաձայն, այս նուէրները մատուցուած են գարնան գիշերապատկերի կամ ներուզի սունին առիթով, զոր իրացիք մինչեւ այսօր կը տօնեն նշելու համար իրենց նոր տարին:

Մեծն Աղեքսանդր Փերսեփոլիսը գրաւեց եւ աւերեց Ն.Ք. 330ին: Քաղաքին աւերակները կարեն շարունակ պահպանուած են հետզհե-տէ բարձրացող աւազաբլուրներու, չոր կլի-մայի եւ անապատային մաքուր օդին շնորհիւ:

Սակայն նորօրեայ սպառնալիքը կը վհատեցը-նէ անոր պաշտպանները:

Մայիսի սկիզբը խուժը մը իրաւագէտներ եւ մտաւորականներ, «ազգային աղէտի» մը առաջը բերան հարսնաձիւնիցիներով, արտասո-վոր կերպով յախուռն բաց նամակ մը հրապա-րակեցին պահանջելով անմիջական միջոցառու-մներ՝ Փերսեփոլիսի պահպանումին համար:

«Մենք կը պայքարինք բնակչութեան աճին պատճառով ստեղծուած ճնշումին եւ անոր տարածումին դէմ, - կ'ըսէ Մուհամէտ Հասան Թալեպիան, որ Իրանի Մշակութային Ժառան-գութեան կազմակերպչութեան մէջ ակաւաւոր ուսումնասիրող մըն է: - Փերսեփոլիսի ապա-գան շատ կը մտահոգէ զիս»:

Քաղաքին պաշտպանութեան համար պայքա-րող մասնագէտներ կը ձգտին արգիլելու գօտի մը ստեղծել անոր շուրջ եւ գործարաններու սե-փականութիւններէն կը պահանջեն կենսոլորտի ապականուցող կանխարգիլելու միջոցներ գտնել: «Չենք կրնար քանդել տուներն ու գործարան-ները: Միայն կրնանք կասեցնել անոնց հին քա-ղաքին մօտենալը», կ'ըսէ Թալեպիան:

Փերսեփոլիսը չափազանց զգայուն է ապա-կանութեան դիմաց: Անոր քարէ աւերակներ-րուն մեծ մասը հարուստ է կրաքարով, եւ ապականած օդին թթուները ուղղակի աւեր կը գործեն անոր վրայ:

Աւերակներուն մէկ մասը անձրեւային թթուներուն եւ ջերմաստիճանի փոփոխու-թիւններուն դէմ պաշտպանուած է արուես-տական ծածկոյթով մը, սակայն փակ տարած-քին մէջ խոսացած խոնաւութիւնը ինքնին այլ վտանգ կը սպառնայ:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄՇԱԿՈՅԹՆԵՐ ԿԱՊՈՂ ՓԱՌԱՏՕՐ ՄԸ «ՊԻՊԼՈՍ 2002»

Լիբանանի ամառը լեցուցած փառատոներու եռույցը մէջ «Պիպլոս 2002» փառատոնը ունի իր իւրայատուկ դրոշմը: Այլ փառատոներէ իր տարբերութիւնը ան կը պարտի 1999էն ի վեր իրեն տրուած «Մետիթերանէօ» անուանումին, որուն գաղափարը յղացած է փառատոնին բեմադրիչ Միշէ Էլէֆթիթիտէսը: Չորս շաբաթով երջի վրայ երկարող փառատոնին շարքէն կ'ուսնան արեւելեան երաժշտական գործիքներու վարպետի հոշակի տիրացած Շահատէ էրբայրնէրը, որոնց կ'ընկերանայ ակադեմիկ երգչուհի Նահաւանտ, արաբական եւ յունական երգերու մեկնաբան ժիհատ Մահֆուզ, ինչպէս նաեւ՝ յեղափոխական եւ կիներու իրաւանց նուիրուած երգերու մեկնաբան Թանիա Սալէի:

Նշենք, որ «Պիպլոս 2002» փառատոնի յանձնախումբին անդամներուն շարքին է Սաֆիի եւ սպանական գնչու երգար-

ւենտի երաժիշտ Խոսէ Ֆեռնանտէսի, Հանիսի եւ քուպայական խումբի մը, Թոնի Հաննայի եւ ետիոսլաւ խումբի մը, Տեմիս Ռուսուի եւ «Օրիէնթըլ ռուք օրքեսթրա»ի եւ այլ արուեստագէտներու երաժշտական արուեստներով:

«Պիպլոս 2002» փառատոնը կը սկսի այսօր՝ 23 Օգոստոսին եւ կը շարունակուի մինչեւ 7 Սեպտեմբեր: Չորս շաբաթով երջի վրայ երկարող փառատոնին շարքէն կ'ուսնան արեւելեան երաժշտական գործիքներու վարպետի հոշակի տիրացած Շահատէ էրբայրնէրը, որոնց կ'ընկերանայ ակադեմիկ երգչուհի Նահաւանտ, արաբական եւ յունական երգերու մեկնաբան ժիհատ Մահֆուզ, ինչպէս նաեւ՝ յեղափոխական եւ կիներու իրաւանց նուիրուած երգերու մեկնաբան Թանիա Սալէի:

Նշենք, որ «Պիպլոս 2002» փառատոնի յանձնախումբին անդամներուն շարքին է Սաֆիի եւ սպանական գնչու երգար-



ձապահ): Փառատոնին յանձնախումբը, գործակցութեամբ ժիպէյի քաղաքապետութեան, պիտի փորձէ յառաջիկային յաջողցնել դասական երաժշտութեան եւ արուեստի նուիրուած մեկնաբան Թանիա Սալէի:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	31,40 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Զուլթեան տինար	4953,41 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,41 - 2128,42	լ.ն.
Պահրէյնեան տինար	3995,00 - 4000,00	լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիամ	408,41 - 412,42	լ.ն.
Քարաբեան ուիալ	412,16 - 416,15	լ.ն.
Սեուտական ուիալ	399,88 - 403,99	լ.ն.
Օմանեան ուիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
